

9088

9088
Quadruplicate

Handwritten notes in cursive script, likely bleed-through from the reverse side of the page. The text is partially illegible but appears to contain several lines of text.

9(55)

7-20

1917

//

//

//

//

//

//

//

//

//

//

9088

Երանյան Թ. Բ. Ա. Ն.

Պ. Ք. Ք.

№ 6

«ԸՅԳ»-ի ԳՐԵԴԱՐԸՆ

Ն 6

Հ. ՊԱՆԻՐԵԱՆ

ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ

ԺԱՐԺՈՒՄՆԵՐԸ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

300

1356-ՊԱ

Թ. Ա. Ի. Ի. Գ.

«Փարոս» տպարան

1917

9(55)
7-20

ՃՈՇԱԴՅՈՒՆ

№6

«ՍՅԳ»-ի ԳՐԵԳԵՐԸՆ

№6

300
1556-ՊԱ



Հ. ՊԱՆԻՐԵԱՆ

ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ

ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

1003
1929Ե



ԹԱԻՐԻԶ

«Փարոս» տպարան

1917

8806

17.07.2013

18156

1883

ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆ ՂԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՏՏԱՆՈՒՄ

(Սահմ. քառամեակի առթիւ)

I.

Լամաշխարային պատերազմի ժխորի
 մէջ բոլորովին անյիշատակ անցաւ
 մեր երկրի քաղաքական վերա-
 ծնութիւնը, որ կատարւեց սրանից ու-
 ղիղ 10 տարի առաջ: Պարսկական կա-
 ուստարութիւնը իր անփառունակ և
 խղճալի այս օրերին, ինքն անգամ որ
 և է ձևով չանդրադարձաւ դրան, որ
 և է կերպ շիշատակեց, չը տօնեց:
 Նոյն և պարսիկ մամուլը: Մեզ է վի-
 ճակւած յետադարձ ակնարկ ձգելու մեր
 երկրի պատմութեան այս, ոչ այնքան
 հեռու անցեալի վրայ, տեսնելու հա-
 մար, թէ ինչպիսի պայմաններում ծը-

Գրադարան
 Երևան
 12296 4

նունդ առաւ սահմանադրական ըէժիմը, ժողովրդական ներկայացուցչութիւնը այս դարաւոր Իրանում:

Սահմանադրակ. շարժման սկզբնաւորութիւնը մեր երկրում ինչքան էլ հին համարենք, այնուամենայնիւ նա ոչ մի ժամանակ այնպիսի լուրջ, կառավարութեան ընդդիմադիր կերպարանք չի ստացել, ինչպէս 1905 թւականի վերջին: Իսկ հոկտ. 17-ի մանիֆեստից անմիջապէս յետոյ էր: Պարսկաստանում ստեղծւած սոցեալ-անտեսական և քաղաքական պայմանները, նոր՝ երրորդ դասակարգի կերպարանաւորում և սեփնական շահերի ըմբռնումը, երկրի ոյժերի բէալ յարաբերութիւնները հող էին պատրաստել յեղաշրջման՝ նոր Պարսկաստանի վերաստեղծութեան մահար, հին, ֆէոդալական Պարսկաստանի փոխարէն: Հարեան երկրում կատարւած պատմական խոշոր անցքերն ևս չէին կարող իրենց ազդեցութիւնը չունենալ պարսիկ ինտելիգենտ հայրէնասերների մտքերի վրայ, որ ամենից առաջ արտայայտուում է այն ժամանակայ պարսկական պը-

րեմիեր մինիստր էյն-զուլէի դէմ, մեղադրելով նրան պետութեան հաշիւն հարստացման մէջ:

Սմորումը և դժգոհութիւնը լայն ծաւալ է գտնում Պարսկաստանի աւելի կըթւած դասի՝ հոգեորականութեան շարքերում, թէ մայրաքաղաքում և թէ նահանգներում, որ դեռ նախորդ դարուց, Նասրէզդին շահի օրից կառավարութեան հետ հակամարտութեան մէջ էր, շնորհիւ այն պայքարի, որ Նասրէզդին շահ և իր յաջորդները սկսել էին հոգեորականութեան դէմ, նրա անսահման և կամայական ազդեցութեան, երկրում. վերջ դնելու համար: Ծերունի սէյիդի սղանութիւնը Թէհրանի նահանգապետի ձեռքով, ներկայանում է գոնէ արսափն, անմիջապէս պատճառ յուզմունքի, որի ժամանակ մի շարք աչքի ընկնող հոգեւորականներ բէսա են մանում Շահ-Արդիւ-Ազիմ սրբավայրում, Թէհրանից հազիւ 15 վերստ հեռու, և այնտեղից կոչ են սնում ժողովուրդին, մեղադրելով պարսկական կառավարութիւնը երկրի դժբաղդութեան գործում, պահան-

ջերով ըէֆորմներ երկրի կառավարութեան մէջ՝ ժողովրդական ներկայացուցչութեան մտքով:

Ժամանակի Մուզաֆֆերէզդին շահը, ծերացած, հիւանդոտ և թուլակազմ անձնաւորութիւն, սինմիջապէս զիջում է այդ տրտունջներին և համաձայնուում է հիմնելու 1906 թ. յունւարին այսպէս կոչւած «Արդարութեան տուն», որին պիտի մասնակցէին երկրի զանազան մասերից ընտրւած ներկայացուցիչները՝ երկրի կառավարութեան և կառավ. գործունէութեան վրայ հսկելու սահմանափակ իրաւունքներով:

Նոյն թւականի մարտ ամսին կազմուում է կառավարական կոմիտեան, մասնակցութեամբ մի քանի մուշտէհիդների, որ գումարւում է ապրիլ 17-ին, որից յետոյ օրէնքի նախագիծը յանձնուում է մշակելու 7 հոգուց բաղկացած ձեռնահաս համարող անձնաւորութիւններին, որոնք էին՝ Իհթիշամ-ու-Սալթանէ, Մօհթէշամու-Սալթանէ, Սանիէդ-Իովլէ, Մուխրիբու-Սալթանէ, Ալաուլ-Մուլք. Մուշիր-ու-Մուլք, Մութամենուլ-Մուլք և Հիւսէյն-խան: Բեֆորմներ

րի ընթացքը ստեղծեց զանդաղում է. գրա գլխաւոր պատճառը համարւում է էյն-ու-Իովլէն. դժգոհութիւնը քանի զնում մեծանում է, կառավարութիւնը խստութիւններ է ձեռք առնում. քըշում է մայրաքաղաքից բեֆորմների կողմնակիցներին և յունիս ամսին ձեռնարկում է մինչև իսկ ձերբակալելու յայտնի սահմանադրական Շէյխ Մօհամմեդին, որի աւթիւ արիւնահեղ ընդհարում է տեղի ունենում Թէհրանում հոգեւորականութեան և ոստիկանների միջև, որի ժամանակ սպանւում է մի սէյիդ:

Հսկակառավարական ազիտասիօնը օրէցօր ուժեղանում է, հոգեւորականները մահում են մեչիդները, խանութները վակուում, աչքի ընկնող մուշտէիդները զնում են Կում, որաեղից կոչեր են ուղղում ժողովրդին, որպէսզի, եթէ շահը ըէֆորմներ չը մտցնի և ըէակցիօներ մինխտրներ՝ Աթաբէկ Աղամին, էյն-ու-Իովլէին և ուրիշներին չը հեռացնի, սպառնում են բոլորը միասին անցնել Գէրբէլա և զրկել այդպիսով մայրաքաղաքի ժողովրդին հո-

գեւոր պէտքերը լցուցանելուց:

Հոգևորականութեան պահանջը ու-
ժեղացնելու համար, յուլիս ամսի սկզ-
բին մօտ 14,000 հոգի աչքի ընկնող
վաճառականներէից բեստ են նստում
անգլիական դեսպանատան: Եանը չը-
կարողանալով յոյս դնել մայրաքաղաքի
փոքրաթիւ և վատ զինւած զարնիզոնի
վրայ, զիջումի ճանապարհն է ընտրում՝
հեռացնում է դժգոհութիւն յարուցա-
նող մինիստրներին և նշանակում է Մու-
շիբ ուղ Դովլէին պրիմիեր մինիստր՝ սա-
ղբաղամ: Եանի այդպէս արամադրուե-
լուն նպատում են նաև իրենց խոր-
հուրդներով ժամանակի անգլիական
և ուսսական դեսպանները Թէհրանում՝
Մարլինգ և Հարդելգ: Օգոստ. 5-ին շա-
հի պալատում տեղի է ունենում պաշ-
տօնական օրհնութիւնը նոր հիմնւած
ազգային ժողովի՝ «Մէջիս-Միլլիի», ո-
րի կանոնադրութեան և ընտրական կա-
նոնների ստորագրութիւն կատարում է
28 օգոստոսի. այնպէս որ սեպտ. ամսի
24-ին արդէն մայրաքաղաք հասած 100
պատգամաւորների և շահի ներկայու-
թեամբ հանդիսաւորապէս բացւում է

Պարսկաստանի առաջին Մէջլիսը, որի
նախագահ է ընտրուում Սանիէդ Գովլէն:

Արդէն հիւանդ Մուզաֆֆերէզլին
շահի առողջութիւնը քանի գնում վա-
տանում է: Նա պետութեան գործերով
զբաղել չէր կարող, որի համար նոյն
տարւայ դեկտեմբերին Թէհրան է կան-
չւում թագաժառանգ Մուհամեդ Ալի
Միրզան Թաւրիզից, որ պետութեան
գործերի ղեկը իր ձեռքն է առնում: Ար-
կզբում, հօր կենդանութեան ժամանակ
դէպի նոր ըէժիմը համակրութեամբ
արամադրւած Մուհամեդ Ալին շտա-
պում է հրատարակել սահմանադրու-
թեան հիմնական օրէնքները, որ Մու-
զաֆֆերէզլինի կողմից, որպէս նրա
վերջին պետական ակտը ստորագրուում
է 18 դեկտ. 1906 թւին: Նոյն ամսի 27-
ին Մուզաֆֆերէզլինը վախճանւում է
և շնորհիւ թագաժառանգի ներկայու-
թեան, գահակալութիւնը անցնում է ա-
ռանց բարգութիւնների:

Մեր ընթերցողների համար անշու-
շտ հետաքրքիր կը լինի, եթէ առաջ
բերենք այստեղ Իրանի շահնշահ Մու-
զաֆֆերէզլինի հրովարտակը՝ սահմանա-

են բացառապէս պետութեան և ազգի զարգացման և բարգաւաճման համար՝ աղօթեն մեզ համար»:

Տրւած է Կարբի-Սահրիկրանիէ-ում, 14 Ձէմադի-ուս-սանի 1324 թ. (23 յուլիսի 1906 թ.) Մեր թագաւորութեան 11-րդ տարւոյ ամբան: Բնագիրը ստորագրել է՝ Մուզաֆէրէ դղին. Բնագրի հետ ճիշտ է՝ Սազրա-զամ Մուշիբ Դօվլէ:

Հրատարակւած սահմանադրութեան հիմնական օրէնքները՝ Կանունի Էսաօին, 51 հիմնական և 107 լրացուցիչ յօդւածներից է բաղկացած: Կառավարութեան սիստեմը երկպալատեան է՝ Մէջլիս և Սենատ. Մէջլիսը ժողովրդական ներկայացուցիչների պալատն է 163 անդամներով, 2 տարի ժամանակով ընտրւած, Թէհրանից և գաւառներից և որի թիւը անհրաժեշտութեան դէպքում կարող է 200-ի բարձրանալ (Տ. 4). Իսկ Սենատը, որի անդամների թիւը 60 է, 30-ը նշանակում է ինքը շահը, 15-ական հոգի Թէհրանից և գաւառներից, իսկ մնացած 30-ը ընտրւելու է ժողովրդի կողմից, 15-ական

հոգի, մայրաքաղաքից և գաւառներից: Սինատի կանոնադրութիւնը հաստատւելու է Մէջլիսից: (Տ. Տ. 43, 44, 45):

Մէջլիսի առաջին գումարումից անցել է 10 տարի, 3 անգամ Մէջլիս է գումարւել, բայց Սենատը ոչ մի անգամ չգումարւեց, հակառակ Մահմէդ Ալի Շահի և նրա արտաքուստից յետոյ պետական ինսամակալների ջանքերի, որոնց ոյժ էին տալիս ժամանակակից մինիստրական կաբինետները: Ամէն անգամ, Սենատի հիմնման խնդիրը յարուցանելիս, Մէջլիսը, որի կազմը, թէ երկրորդ և երրորդ գումարումների ժամանակ մեծամասնութեամբ ղեմակրատ տարրերից էր կազմւած, ամեն անգամ զանազան պատրւակներով կարողացել է յետ մղել օրէնսդրական այդ յետադէմ ինստիտուտի հիմնման առաջարկը:

II

Նոր շահի՝ Մէհմէդ Ալիի և առաջին Մէջլիսի մէջ, նրա գահակալութեան տառջին օրերում տիրում էր սրտազին համերաշխութիւն. վստահութիւն դէպի նոր շահը կատարեալ էր, որովհետև

յայտնի էր, որ գեռ վալիանթ ժամանակ, երբ Թաւրիզից Թէհրան էր կանչուել հօրը հիւանդութեան պատճառաւ, նա ամեն ջանք գործ էր դրել, որ սահմանադրութեան հիմնական կանոնները շուտով վաւերացուեն և հրատարակուեն, ինչպէս որ եղաւ:

Նոր շահի և Մէջլիսի մէջ առաջին անհամաձայնութիւնը տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ Մահմեդ Ալին կառավարչական պաշտօններում նշանակեց հին աէժիմի այնպիսի անձնաւորութիւններ, որոնք իրենց անցեալով կասկածելի էին և վստահութիւն չէին վայելում: Չնայած, որ շահը սրկզբում տեղի տւեց այդ արտունջների առաջ և հեռացրեց մի շարք յետագէմ պաշտօնեաներ, ինչպէս պարստի մինիստր էմիր-Բահադուր Ջանգ, Սփահար, Նասրուլ Սալթանէ (Թէհրանի գաւրնիզոնի հրամանատարը), Իսպահանի նահանգապետ՝ Ջիլի Սուլթանը և այլն, բայց և այնպէս դրութիւնը դնալով վատանում էր և աւելի ու աւելի լրջանում:

Պարսկաստանի զանազան քաղաքներում կազմակերպւում են առանձին

կոմիտէներ՝ «էնջումաններ», որոնք աշարուրջ հսկում էին սահմանադրութեան պահպանման վրայ: Փամանակի սաղրադամը՝ Մուշիր-ուդ-Իովլէն անկարող է լինում Մէջլիսի հետ համերաշխ գործել: Առաջին Մէջլիսը, իր կազմով, ինչպէս սպասելի էր, թունդ ազգայնական, ամենախիստ կերպով արտայայտւում է արաւքին փոխառութեան դէմ, ամեն տեսակ արտաքին ազդեցութեան, ինչպէս և այն օտարազների, որոնք ղեկավարում էին պարսկական մաքսատունը և որի հետեանքն եղաւ մաքսատների մինիստր բելզիացի Նաուսի հրաժարականը:

Իր դիրքը ամրացնելու և Մէջլիսի դէմ յաջող կերպով պայքարել կարողանալու համար, Մահմեդ Ալին արտասահմանից հրաւիրում է հին և փորձառու պետական գործիչ Աթարէկ-Ազամ էմին-ու-Սալթանէին, որ հակառակ Մէջլիսի նախագահ Մանի-էգ-Իովլէից գտած պաշտպանութեանը, հանդիպում է Մէջլիսի ուժգին ղեմադրութեան և հակառակութեան, որ մեղադրում էր նրան դէպի օտարազները տաժած հա-

մակրանքի և Մէհմէդ Ալի շահին նւիր-
 ւածութեան մէջ: Աթարէկ Աղամը 1907
 թւականի ապրիլ 24-ին մինիստր նա-
 խագահի պաշտօնը ստանձնելով, շա-
 րունակում է մինչև նոյն թւականի աւ-
 րան վերջերին, երբ նրա պաշտպանը՝
 Սանի-էդ-Դովլէն հրաժարական տալով,
 Մէջլիսի նախագահ է ընտրւում Իհթի-
 շամ-ուս-Սալթանէ: Գործակցութիւնը
 Մէջլիսի հետ այնուհետև դառնում է
 անհնարին. օգոստ. 18-ին Աթարէկ Ա-
 զամը Մէջլիսի շէնքից դուրս գալիս մա-
 հափօրձի է ենթարկւում և ամիջապէս
 մեռնում է:

Սրա յաջորդ Մուշէր-ուս-Սալթա-
 նէի և ապա նաար-ուլ-մուլքի մինիստ-
 րութիւնները, ճիշտ է. մի բանի ամիս
 ղրութիւնը մի փոքր պարզում, մտքե-
 րը խաղաղում են. մինիստրների խոր-
 հրդին անսալով, շահը մինչև իսկ վճ-
 ոում է անձամբ այցելել Մէջլիս, ինչ
 որ ազգաբնակչութեան վրայ թողնում է
 անկեղծ, հաճելի տպաւորութիւն, որ
 ազդում էր նոյն իսկ գաւառների վրայ,
 բայց այս բոլորը երկար չի տևում և
 նոյն տարւայնոյեմբերի վերջերին մայ-



րաքաղաքում նորից ծագում է դժգոհու-
 թիւնն և անվստահութիւնը, որ զայնու
 պի կառավարութիւնը, որ զայնու
 ւելի և աւելի հիմնաւորւում է: Այդ դժ-
 գոհութեան հիմունք էին ծառայում գլ-
 խաւորապէս շահի մտադրութիւնը՝ ո-
 չնչացնել էնջումանները, որոնք պարս-
 կական նորաբողբոջ սահմանադրութեան
 յենարաններն էին: Ազատական տարրերը
 երկրում շահի այդ մտադրութեան մէջ
 նկատում էին խարդախ, դաւադիր ըզ-
 դացումներ ազատագրական — սահմա-
 նադրական շարժման վերաբերմամբ:

1922

Այս յուզմունքը առաջ է բերում ա-
 ռաջին սուր կօնֆլիկտը Մէջլիսի և Մահ-
 մէդ Ալի շահի միջև, որ իր առաջ բե-
 րած պատմական դէպքերի զարգա-
 ցումով հասցնում է մինչև Մէջլիսի ու-
 բակոծումը, յունիսի 10-ին 1907 թւի.
 իսկ նրանից մի տարի յետոյ՝ 3 յուլիսի
 1909 թւի, նոյն Մահմէդ Ալիի գահըն-
 կէցութեան և Պարսկաստանից արտա-
 քսման:

Անհրաժեշտ է այստեղ շեշտել մի
 շատ կարևոր պատմական հանգամանք,
 որ եթէ ոչ իր սկիզբը, գոնէ իր կերպա-

բանաւորումը ստացել և պարսկական յեղափոխական շարժումների հետ միաժամանակ. և է նրա շարաբաստիկ ծնունդը՝ դա 1907 թւականի անգլո-ուսական համաձայնութեան դիպլոմատիկական ակտն է Պարսկաստանի վերաբերմամբ կայացած:

Պարսկաստանում բռնկւած սահմանադրական-դեմոկրատական շարժումները հենց սկզբից իրենց վրայ հրաւիրեցին երկու հարեան հօօր պետութիւնների՝ Ռուսաստանի և Անգլիայի ուշադրութիւնը: Այն խոշոր տնտեսական շահերը, որ ունէին այս հարեաններին մէկը հիւսիսային, իսկ միւսը՝ հարաւային Պարսկաստանում, անհրաժեշտաբար պիտի առաջ բերէին այն լուրջ ուշադրութիւնը, որով հետևում էին այդ երկու պետութիւնները այս երկրում կատարւած անցքերին՝ իմպերիալիստական-հւստոյակական ախորժակներով:

Շահազրգուած պետութիւններից մէկը՝ Ռուսաստանը սկսում է պարբերական քննութեան ենթարկել այդ անցքերը Առանձին Խորհրդում, որ կա-

զմւած էր պարսկական գործերի համար. այդ Խորհրդում մտնում են մի շարք մինիստրութիւններ և դեպարտամենտների ներկայացուցիչները: Խորհրդի նիստին հրաւիրւում են նոյնպէս Կովկասի փոխարքան, Լոնդոնի և Կ. Պոլսի դեսպանները, Թէհրանի դեսպանը և Թաւրիզի ընդհ. հիւպատոսը: Իրա հետ միաժամանակ բանակցութիւններ են վարւում Ռուսաստանի և Անգլիայի միջև Միջին-ասիական գործերի վերաբերմամբ, որ հանգում է 18 օգոստ. 1907 թւի դաշնագրութեան, որով վերջ է դրւում այդ պետութիւնների միջև երկար տարիների մրցակցութեան:

Այդ համաձայնութեան նախաբանը սկսւում է հետևեալ հանդիսաւոր խոստումով, որ մենք վերջնում ենք V. Berard-ից (*). «Մեծն Բրիտանիայի և Ռուսաստանի կառավարութիւնները փոխադարձաբար պայմանաւորւում են յարգելու Պարսկաստանի ամբողջութիւնն ու անկախութիւնը և անկեղծօրէն ցանկանում են ամբապնդումն կարգերի

(*) Victor Berard, „Révolutions de la Perse“, Paris 1910, էր. 367: Զ. Պ.

ամբողջ երկրում, ինչպէս և ուրիշ ազգերի առևտրի և արդիւնաբերութեան տեսական շահերի հաստատումն»:

Ճիշտ է, այդ համաձայնութեան հիմքում ֆորմալ կերպով շեշտած է Պարսկաստանի անձեռնմխելիութեան և անկախութեան սկզբունքը, սակայն միաժամանակ Պարսկաստանը ազդեցութեան երկու զօների կամ սֆերաների բաժանելով, դրանով սկիզբն է դրում նրա քաղաքական և տնտեսական ըստրկացմանը՝ երկու կապիտալիստ պետութիւնների «հովսնաւորութեամբ», որից յետոյ Պարսկաստանը իրապէս դադարում է անկախ պետութիւն լինելուց և նրա քաղաքական, տնտեսական և հասարակական կեանքում չի տեղի ունեցել որևէ երևոյթ, թէկուզ մանր ու աննշան, առանց խնամակալ պետութիւնների գիտութեան և սանկտիային:

III.

Մենք տեսանք, որ 1907 թ. վերջերին գրութիւնը նորից բարդանում է. յեղափոխական ժողովարանները՝ Էնջումանները շարունակում են իրենց

կասկածները ու բացարձակ անվստահութիւնը շահի անկեղծութեան նկատմամբ, որ շարունակում է շրջապատել իրեն ըէակցիայի սիւներով, որպիսիներն էին Ամիր-բահդուր-Ղանգը, Սաադէթ-դովլէն, Ալա-էդ-դովլէն և այլն:

Նոյն տարւայ դեկտ. 2-ին յուզմունքը մայրաքաղաքում մեծանում է. Էնջումանները ժողովուրդը հաւաքում են մէջիդներում, ուր արտասանում են յեղափոխական, քաղաքական քարոզներ, որոնց ժամանակ աչքի է ընկնում յեղափոխութեան մուրաբանգ ազիտատոր Մելիք-ուլ-մութեքալեմին: Պահանջ է դրւում անմիջապէս հեռացնել շահի ըէակցիօներ խորհրդականներին, որոնցից Ամիր-Բահդուրին մեղադրում էին Ատրպատականից 800 ձեւաւորներ բերելու է Մէջլիսը ցրելու մտադրութեան, իսկ Սաադէթ-դովլէն՝ ֆրանսիական կայսր Նապոլէոն III-ի կանոնադիրը թարգմանելու և դրանով Մահմէդ Ալի շահին միջոցներ ցոյց տալու մէջ՝ Էնջումանները ցրելու համար: Նահը տաշարկւած սպահանջները ոչ միայն չի ընդունում, այլ և հրամա-

յում է Էնջումանները ցրել. մինիստրութիւնը սակայն չի համաձայնուում և հրաժարական է տալիս, որ շահի կողմից պալատ է կանչուում և նրա նախագահը՝ Նասր-ուլ-ժուլքը մի օրով այնտեղ ձերբակալուած պահուում է և արձակուում միայն Անգլիայի երկիրը, որովհետեւ պարսիկ այդ լիբերալ դիպլոմատը Անգլիայում մեծ ժողովրդակալականութիւն էր վայելում: Շահի պալատի առաջ՝ Թովիսանէի հրապարակում լցուում է շահի կողմնակից ամբողջը, որ սպիտակ սաւաններ քաշած, քաղաքի փողոցները շրջում է, կատարելով հակասահմանադրական ցայցեր: Նոյն օրը՝ դեկտ. 5-ին Մէջլիսի շինութեան մէջ դումարուում է պատգամաւորների գաղտնի խորհրդակցութիւն, որին մասնակցում է նաև շահի հօրեղբայր՝ Զիլի-սուլթանը, որը ինչպէս երևում է, գահին տիրելու յաւակնութիւններն ունէր: Նոյն օրը Մէջլիսի մի պատգամաւոր, մի շրջաբերականով Մէջլիսի անունից, ներկայացւած օտար պետութիւնների Թէհրանի միսսիաններին, խնդրում է միջնորդել իրենց

վէճին՝ շահի հետ: Առանց դրան էլ շահի և իր ժողովրդի մէջ յարաբերութիւնների այս սրբումն, անշուշտ, չէր կարող վրիպել Պարսկաստանի վիճակով ամենից աւելի շահագրգռող հովանաւոր պետութիւններին՝ Ռուսաստանի և Անգլիայի ուշադրութիւնից, որոնք իրենց համաձայնութիւնը, 1907 թւականի օգոստ. 18-ին կայացած, առաջին անգամ այժրւմ երևան են հանում: Նոյն թւի դեկտ. 14-ին Թէհրանի անգլիական դեսպան Մարլինգը իր կառավարութիւնից ստանում է հետևեալ հրահանգը. 1) չէղբութեան պահպանումը շահի և իր երկրի միջև եղած վէճի մէջ. 2) Չմերժել շահի խնդիրը, եթէ նա այդ վէճում պարտուած՝ սպաստանի դեսպանատանը. 3) այդ ապաստանը չը համարել կողմնակցութիւն և պաշտպանութիւն շահին. 4) պահանջի դէպքում յանձնել նրան ժողովրդին, եթէ սա կը խոստանայ նրան անվտանգ երկրի սահմաններից հեռացնել. 5) դեսպանատան ըէստ նստած ժամանակ, պահպանել նրան երկու պետութեանց դրօշակների տակ և նրանց

պահակներով:

Ռուսական դեսպանը Թէհրանում հոֆմէյստեր Հարդելիզը Պետրոգրադից եղած կարգադրութեամբ միանում է այս ինստրուկտիօնին, մացնելով 4-րդ կէտում այն փոփոխութիւնը, թէ՛ շահը փոխանակ ժողովրդին յանձնւելու, հեռացւելու է մինչև սահմանագլուխը՝ դեսպանատների պահակների ուղեկցութեամբ:

Այնուհետև հետևում է ռուս-անգլիական դիպլոմատիայի առաջին միջամտութիւնը Պարսկաստանի այս ներքին պայքարին: Այդ օրերում Հարդելիզն ու Մարլինզը տեսակցում են շահի, Մէջլիսի և Զիլի-սուլթանի հետ առանձին-առանձին և թելադրում են փոխադարձ զիջումներով հաշտւելու:

Մինչ այս մինչ այն, երկրի էնջումանները ամեն կողմից օգնութիւն են հասցնում Մէջլիսին, որ իր դիրքը աւելի և աւելի ամրացնում է և շահը չրկարողանալով սկզբի օրերում ունեցած ոյժերի իր գերակշռութիւնը օտարագործել, զիջում է Մէջլիսին հետևեալ կէտերում. 1) հեռացում է Սաադէթ-գովլէն, 2) էմիր-բահադուր-ջանգր մի-

այն շահի պալատի գործերով է զբաղւելու. 3) Չարամիտ անձերը պատժւելու են. 4) Շահը երգւելու է Մէջլիսում սահմանադրութեան հաւատարիմ մնալու խոստումով. 5) բոլոր զինւորական ոյժերը, կազակները բրիգադայի հետ միասին գրւելու են զինւորական մինիստրի տրամադրութեան տակ և 6) 200 սարքագներ պիտի նշանակւեն Մէջլիսի պահպանութեան համար:

Գաւառը հանգստացնելու համար անմիջապէս ամեն կողմ հեռագիրներ են ուղարկւում մայրաքաղաքից, շահի և Մէջլիսի միջև կայացած այս հաշտութեան մասին, 1908 թ. յունւար մէկին կայացած, որից անմիջապէս յետոյ, նոյն ամսի 9-ին տեղի է ունենում շահի և Մէջլիսի փոխադարձ երգումները՝ կատարւած Աորանի վրայ:

IV.

Թէհրանում կատարւող այս անցքերը իրենց ուժգին արձագանքն են գտնում Թաւրիզում, Պարսկաստանի այս երկրորդ մայրաքաղաքում, որ հէնց սկզբի օրերից հանդիսացել էր իրա-

պէս պարսկական յեղափոխական շարժման վառարանը: Թաւրիզի էնջումէնը, Պարսկաստանի միւս բոլոր քաղաքների էնջումաններից աւելի ուժեղըն և աւելի ազդեցիկը, արթնութեամբ և աչալըջօրէն հսկում էր մայրաքաղաքի անցուղարձին: Մօտիկից ճանաչելով իր նախկին վալիահիթ՝ Մէհմէդ Ալիին, նա հաւատ չէր ընծայում նրա բոլոր խոստում ու երդումներին, կատարւած թէկուզ Ղորանի վրայ: Գրանով պիտի բացատրել այդ օրերին, թէհրանի օտար միսսիաններին խփած նրա շրջաբերական հեռագիրը, ըստ որում Ատրպատականը հրաժարւում է ճանաչել Մէհմէդ Ալիին, որպէս պարսկաստանի շահ, որովհետև նա մի քանի անգամ իր խոստումներն ու երդումները զրժել է:

Սակայն Թաւրիզը ամբողջութեամբ յեղափոխական էնջումանի շուրջը համախմբւած չէր, այնտեղ կային և շահի կողմնակիցները՝ միապետականներ, որոնք զլիաւորապէս քաղաքի Դաւաչի կոչւած թաղումն էին կենտրոնացել և նախկին յեղափոխական Միր Հաշիմի

ղեկավարութեամբ կազմել էին «էնջումէն իսլամիէ» կոչւած յետադիմական կոմիտէն: Յունւար ամսի 11-ին, 1908 թ. սկսւում են արիւնհասեղ ընդհարումները շահի և սահմանադրութեան կողմնակիցների միջև Թաւրիզում՝ և էնջումէնը, ինչպէս և ժամանակի նահանգապետական տեղապահ Մուքտէդիր-զովլէի բոլոր ջանքերը՝ խաղաղացնելու այդ ընդհարումները՝ ապարդիւն են անցնում:

Այս դէպքերի հետ զուգրնթաց Ատրպատականում ծայր է տալիս անարխիա. դեռ դեկտ. ամսին, ըստ Թաւրիզի գէն. հիւպատոս Պոխիտանովի հեռագրի, յարձակում է գործւում նաև ուսական պոստի վրայ, որ երթևեկում էր Թաւրիզից-Ուրմիա: Յունւար 16-ին Յամի գաստաւի մօտ կողոպտւում է ճանադարհների արտելչչիկ Վորոնովը իր կնոջ հետ և այսքանն արդէն բաւական էր, որ նոյն Պոխիտանովը պահանջէր իր կառավարութիւնից, որ ուսական շահերի պաշտպանութեան անունով գաստաւներում ուսական պահակների թիւը ուժեղացւի և Թաւրիզ-

Ձուլֆա ճանապարհի պաշտպանութիւնը յանձնուում է Մարանդի դատաւոր Շուշաի-նիզամին, որին ուսու կառավարութիւնը խոստանում է դրամական նպաստ տալ: Իրանից քիչ անց, Արդաբիլի շրջանում տեղի է ունենում պարսիկ աւագակների յարձակումը Բէլուսւարի ուսական պոստի վրայ, որի ժամանակ սպանուում են բողոքատր Դիօեզլագովը և երկու զինւորներ, որի հետևանքով, ինչպէս յայտնի է, ուղարկուում է պատժական էկսպեդիսիոն շահսէվանների դէմ՝ գեներալ Մնարսկու հրամանատարութեամբ:

Մայրաքաղաքումն անգամ զգուում էին, որ շահի և Մէջլիսի մէջ կայացած հաշտութիւնը շատ խախուտ է, որի համար էլ փոխադարձ վստահութիւնը պակասում էր: Փետր. 15-ի դէպքը գալիս է այդ ապացուցանելու: Նոյն օրը, շահը իր շքախմբով և պահակախմբով շրջապատւած, կառքի մէջ քաղաքով անցնելիս, Ձիլի-սուլթանի տան մօտեր մահափորձի է ենթարկւում. անյայտ անձնաւորութիւններ կտուրից ուսմբ են ձգում շահի կառքին շատ մօտիկ:

սպանուում են մի քանի պահակներ և 4 ձիեր. ժողովրդից վիրաւորներ են լինում, իսկ ինքը՝ շահը անվնաս վերադառնում է պալատը: Մէջլիսը այդ դէպքը համարում է «պատահական չարագործութիւն» և կարգադրում է գաւառները, որ շահի անփորձ ազատութեան առթիւ լուսավառութիւններ կատարեն. նոյն արևում է և մայրաքաղաքում:

Սկայն այս ինքնախաբէութիւնները երկար չեն տևում: Մայիսի վերջերին դրութիւնը նորից բարդանում է. ժողովուրդը չի վստահանում ոչ շահին և ոչ նրա մինիստրներին: Հեռագիրներ են ուղղուում Ձիլի-սուլթանին, որ գայ և ընդենտ դառնայ. մայրաքաղաքում բազարը փակուում է. ինչպէս երևում է, շահը ուժեր է կենտրոնացրել և որոշել է այս անգամ վճռական գործել, շատ զիջումներ չանել և կարուկ միջոցների դիմել: Մայիս 22-ին նա կազակների բրիգադայի պահպանութեան ներքոյ, ուսու գնդապետ Լիախովի հրամանատարութեամբ, որին նա անսահման վստահանում է, հակառակ եղած զգու-

շացումներին, քաղաքի իր պալատից գնում է Բաղէշահ, ուր ձերբակալում և պահում է Ջելալ-ուզ-դովլէին, Ալա-ուզ-դովլէին և հեռագրատան կառավարիչ՝ Սարգսր-մանսուրին, մեղադրելով նրանց դաւադրութեան մէջ: Մայիս 26-ին նա նոր հրովարտակով յայտարարում է, որ իր վարմունքը չպիտի համարել երգման խախտումը՝ սահմանադրութեան հաւատարիմ մնալու, այլ միայն նրա համար, որպէսզի «խռովարարները»՝ էնշումանները զսպի:

V.

Մայրաքաղաքում դրութեան այսպէս լրջացման և բարդացման ժամանակ, հովանաւոր պետութիւնների դեսպանները իրենց անելիք քայլերը համաձայնեցնելիս նկատուում է, որ նրանց հայեացքները բաժանուում են. ուստական դեսպան Հարգելիզի կարծիքով, ներկայ կռիւր իբր թէ պայքար է Ջիլլի-սուլթանի և Մահմէդ Ալու միջև, որին երկու պետութիւնները պաշտօնապէս ճանաչել են, ուրեմն և պիտի նրան (Մահմէդ Ալուն) իրենց պաշտպանու-

թիւնը յոյց տան. իսկ միւս կողմից, անգլ. արտաքին գործոց նախարար սըր էդւարդ Գրէյը հրահանգում է Թէհրանի իր դեսպանին, որ իրենց կողմից խիստ քայլեր չարեն պարսկական սահմանադրութեան և Մէջլիսի դէմ:

Նկատելի է, որ այդ երկու պետութիւնների միջամտութիւնը Պարսկաստանի դործերում 1907 թւից ի վեր, թէև եղել է միհամուռ, գլխաւորապէս սկզբունքային խնդիրներում միասնական, սակայն տակտիկի մէջ նըրանք միշտ իրարից տարբերել են: Նոյն իսկ «Նարնջագոյն գրքից», որ ուստական արտաքին գործոց մինիստրութեան պաշտօնական հրատարակութիւնն է պարսկական անցքերին նւիրւած, երևում է, որ Մնգլիան մազաչափ անդամ չզիջելով Պարսկաստանին իր շահերի մէջ, լինի դա տնտեսական, թէ քաղաքական, այնու տմենայնիւ միշտ յետ է պահել Ռուսաստանին յախուռն քայլերից և բիրտ, վերան-բաց միջամտութիւնից պարսկական գործերում. և դա պիտի վերագրել անշուշտ ոչ այնքան անգլիակ. «ազատամիտ» քաղաքա-

կանութեան, որքան, անշուշտ, այն երկիրէց, որ ունեցել է նա ուսական գերակշռութեան վերաբերմամբ Պարսկաստանում: Դրանով պիտի բացատրել ուսական երկդիմի քաղաքականութիւնը պարսկական գործերում: Մի կողմից, երբ Ռուսաստանը պաշտօնապէս յայտարարում էր իր բարեացակամ չէզոքութիւնը հանդէպ յեղափոխական Պարսկաստանին, միւս կողմից իր դիպլոմատիկական ներկայացուցիչներին միջոցով, գաղտնապէս, ամեն կերպ աշակցում էր րէակցիոն տարրերին, շահի գլխաւորութեամբ, խեղդելու իր բռնում ազատագրական շարժումը:

Այս այսպէս լինելով, մեզ համար հասկանալի կը լինի այն յանդուգն ժեստը, որ կատարեց Մահմէդ Ալին յունիս ամսին, այնքան անսպասելիօրէն: Իսկ մայիսի 15-ին շա՛ր գիջում է էնջումաններին պահանջին և հեռացնում պալատից իր վատ խորհրդատուները՝ Բահադուր-Չանգը, որ բէստ է մտնում ուսական կոնսուլատում, Ալի-բէկ, Մովալար-ուս-սուլթան, Մոֆախիր-ուլ-մուլք և էմին-ուլ-մուլք: Իսկ ամսի 25-ին կազ-

մուսմ է նոր մինիստրութիւն, Մուշիր-սալթանէլի գլխաւորութեամբ: Եւ այսպէս, հաշտութեան բանակցութիւնները խաղաղ կերպով առաջ էին գնում, երբ դէպքերը, ինչպէս յիշատակեցինք, միանգամայն շուտ են գալիս:

Յունիս ամսի 10-ին շահը զօրք է ուղարկում Մէլլիս և պահանջում է իրեն յանձնել այնտեղ բոսո նստած 5 ազիտատորներին: Նրա պահանջը մերժւում է և երբ շահի զօրքերը բռնի ոյժի են դիմում, հանդիպում են դիմադրութեան սահմանադրականների կողմից, որոնք հրացանածգութիւն են սրկսում Սիահսալարի մզկիթի կողմից և ուսմբեր են ձգում: Այս դիմադրութեան առաջ սակայն շահը չի նահանջում, նա առաջ է շարժում նաև պարսկական կազակների բրիգադան՝ ուս գնդապետ Լիախովի հրամանատարութեամբ և թնդանօթներով, որ քանդում է Մարպատականի էնջումանը և վնասում պարլամենտի շէնքը: Լինում են սպանուածներ և բաւականի վիրաւորներ, որոնց մէջ նաև ուս ինստրուկտոր Կրաւցև:

Շահի այս վճռական և յանդուգն ձեռնարկը սարսափ և պանիկա է ձրգում սահմանադրութեան կողմնակիցների շարքերում, որոնց ղեկավարները բեստ են մտնում անգլիական զեսպանատանը. բայց և այնպէս շահը նրանցից մի քանիսին որսում է. Մէջլիսի երկու պատգամաւորներ և պրոպականզիստ Մուղեկալեմինը կախաղան են հանւում. մայրաքաղաքը յայտարարւում է զինւորական զրութեան մէջ: Շահի յանդգնութիւնը համնում է այնտեղ, որ անգլիական զեսպանատան առաջ պահակներ է կանգնացնում, բեստ նստողների հոսանքը ղէպի զեսպանատունը արգելելու համար. այս բանը առաջ է բերում խիստ բողոք և սպառնալիք անգլիական կառավարութեան կողմից, որից յետոյ պահակները զեսպանատան առաջից վերացւում են: Իեսպանատանը բեստ նստողների մի մասը, յայտնի յեղափոխական գործիչ և զեմոկրատ կուսակցութեան շեֆ Թաղի-զաղէի, ինչպէս և մի շարք խմբագիրների հետ միասին անգլիական հովանաւորութեան տակ Պարսկաստանի

սահմաններից դուրս են քշւում: Զիլիսուլթանը, որ Իսպահան էր ապաստանել, հեռագրով իր հնազանդութիւնն է յայտնում շահին և ուս-անգլիական զեսպանների երաշխաւորութեամբ, իր երկու որդիներով գալիս է Թեհրան և այնտեղից անցնում է Ներոպա: Սահմանադրական յայտնի մօջղէհիզներ՝ սէյիդ Աբդուլլա և սէյիդ Մօհամէդ յունիս 15-ին Քերբելա են աքսորւում:

Նոյն օրը, յունիս 15-ին շահը մի հրովարտակով յայտարարում է Մէջլիսը ցրւած. նրա գումարման համար սակայն ժամանակ է նշանակում 3 ամիս յետոյ, երբ գումարելու էին իբր թէ և՛ Մէջլիսը և՛ Սեհատը: Այլա շահը հրատարակում է ամիստիա, այն ժամանակ, երբ մայրաքաղաքում բոլոր աչքի ընկնող սահմանադրականները կամ կսխաղանի, կամ մահացութիւնների, բանտարկութեան և քսորի միջոցով ցիր ու ցան էին եղել:

Մէջլիսի ոմբակոծման լուրը կայծակի արագութեամբ հասնում է գաւառները և շմեցնում բոլորին. բէակցիան գլուխ է բարձրացնում, միապե-

տական տարրերը խրախուսւած ոտքի են կանգնում և ամեն տեղ ամբոխի գրլուխն անցած, փակում են էնջումանները, յայտարարում են սահմանադրական կարգերը վերացւած եւ շնորհակալական հեռագիրներ են ուղարկում շահին: Շահը նահանգապետական փոփոխութիւններ է կատարում. Ռաշտում նահանգապետ է նշանակում բէակցիոներ Սարգար Աֆխամին, իսկ Ստրպատականի համար նշանակում է էյնը Դովլէին:

Այսպիսի արագիկ վախճան ունեցաւ Պարսկաստանի առաջին Մէջլիսը, որի գործնէութիւնը կրում է նոյն նրկարագիւրը, որպիսի բնոյթ ունէր պարսկական առաջին շարժումը, այն է՝ հակաառաջական- հակադինաստիական և հակաօսարական: Իր գումարման հէնց առաջին օրերում Մէջլիսը իր զբաղմունքի առարկայ դարձրեց «ազգային բանկի հիմնարկութեան նախագիծը» (*),

(*) Առաջին Մէջլիսի զբաղմունքի միւս գլխաւոր խնդիրներն եղել են՝ «Կալւածական զնահատութիւն և հողային հարկի նոր բաժանման նախագիծը»: Բաղաքային խորհուրդ-

որի իրականացումը, եթէ իհարկէ գրլուխ գար, նպատակ ունէր ազատել երկիրը արտաքին փոխառութիւններից, որ Մէջլիսի կարծիքով ստրկացնում էր երկիրը օտարների առաջ:

Մէջլիսը բացասական դիրք էր բռնում նաև ամեն մի կոնցեսիայի հանդէպ, որ տրւում էր օտարներին, որի արտայայտութիւնը պիտի համարել ազատագրական շարժման սկիզբի օրերից մաքսային միւնիստը Նաուսի և միւս բելզիացի և օտար պաշտօնեաների դէմ բռնկւող շարժումը: Նոյն աչքով էր նայում ազգայնական Մէջլիսը նաև կաշար շահերի ձեռքով ուսններին տրւած ճանապարհների կոնցեսիայի, ուստական Учетно Судный բանկի և ուստական ինստրուկտորների ղեկավարութեամբ կազմւած պարսկական կազակների բրիգադի վրայ, որոնք շահի յենարաններն էին:

ների օրինագիծը», «Մամուլի ազատութեան օրինագիծը», «Նահանգական իշխանութեան լիազօրութիւն և ֆունքսիօնների օրինագիծը» և այլն: V. Berard, «Revolutions de la Perse» Paris 1910 էր. 355: Զ.Պ.

Սակայն այս բոլորից աւելի, Մէջ-
լիսի կողմից Մուհամէդ Ալուն հասցը-
ւած շեշտակի հարւածը, որ նրա ան-
միջական անձնական շահն էր շօշա-
փում, դա՛ առաջին անգամ լինելով,
բիւզճէի քննութիւնն էր, որ նա ձեռ-
նարկեց 1907 թ. նոյեմբեր ամսին: Շահը
չէր կարող անշուշտ հանդուրժել, որ
Մէջլիսը ծախսերի մէջ խնայողութիւն
անելով, նախատեսուած 570,000 Փուլսո
ստերլինգ (14 միլիոն ֆր.) դեֆիցիտի փո-
խարէն ստ. նար ընդհակառակն 230000
Փուլսո ստերլինգ (6 միլ. ֆր.) ուրեմն մօտ
20 միլիոն ֆրանկի յաւելում և որ գլ-
խաւորն է, իրեն բաժին ընկած արքունի
ծախսերի գումարը (ЦИВИЛЬНЫЙ ЛИСТЪ),
որից առատօրէն օգտըւում էին նրա
շուրջը խմբւած ամեն կարգի պարա-
զիտաներ, 50 միլիոն ֆրանկից իջեցնէր
2 ու կէս միլիոն ֆրանկի սիւայն:

VI.

Նորածին սահմանադրութեան գլ-
խին պատրաստած իր coup d'etat-ն կա-
տարելիս, Մուհամեդ Ալին, իր ողոր-
մելի ոյժերի հաւաքումով, բոլորական

գերակշռութեամբ հարբեցած, բոլորո-
վին հաշւի չէր առել գաւառներում,
մանաւանդ Ատրպատականում մեծացող
և լայնացող յեղափոխական ոյժերը,
որոնք սահմանադրական շարժումը տա-
նում էին աւելի ու աւելի դէպի դե-
մակրատացումը: Ատրպատականի սիրտը
Թաւրիզը, ինչպէս գիտենք, այդ ոյժերի
կենտրոնն էր, որ ամբողջ տարի ու
կէսից ի վեր, թագաժառանգ Մահմեդ
Ալու Թէհրան մեկնելուց յետոյ գտնուում
էր յեղափոխական ժողովրդի ձեռքին:

Տեղական էնջումանը, զօրեղը Պարս-
կաստանի միւս էնջումաններից, Ա-
տրպատականի բոլոր գործերը համարեա
լիք ձեռքն է կենտրոնացնում, չզիջելով
այն մինչև իսկ այնպիսի ուժեղ բիւ-
րօկրատի, որպիսին պրինց Ֆերման-
Ֆերմանն էր, որ որպէս նահանգապետ
1907 թ. յունիսին Թաւրիզ եկաւ: Սօ-
ուջբուլաղի քրդերի դէմ արշաւելու պա-
տըւակով սա հեռանում է Թաւրիզից
և քրդերից պարտութիւն կրելուց յետոյ
ուզղակի Թէհրան է վտխձում, առանց
անգամ Թաւրիզ մտնելու: 1908 թ.
ապրիլին ժողովրդի հաւանութեամբ նա-

հանդապետ հրաւիրւած, համոզմունքներով սահմանդրական, բայց երկչոտ Մուխբիր-ուս-սալթանէն կառավարում է մինչև յունիս և մէջլիսի ումբակոծումից երկու օր յետոյ՝ յունիսի 12-ին Զուլֆայի վրայով ծպտւած փախչում է արտասահման՝ Թաւրիզի արսենալը և ամբողջ ռազմամթերքը թողնելով յեղափոխական ժողովրդի տրամադրութեան ներքոյ:

Թաւրիզի ժողովրդի յեղափոխական ոգու բարձրացման ոչ պակաս նպաստում են նաև երկու յեղափոխական կուսակցութիւններ՝ Պարսկաստանի Հ. Յեղ. Դաշնակցութիւնը, յանձին Ատրպատականի կենտրոնական կոմիտէի և իր ճիւղերի գաւառներում՝ Մալմաստում, Ուրմիայում, Սոյում ևայլն, Երեւանի նոյն կազմակերպութեան կենտրոնական կոմիտէն. որ ուղարկում է մի զինւած խումբ, նախ Մաքօյի առաջնորդութեամբ. որի մահից յետոյ, որ տեղի ունեցաւ Երևանում՝ Քեռու դեկավարութեամբ: Խումբը Թաւրիզ հասաւ հոկտ. 25-ին և Թաւրիզի ազատագրական կռիւներում մեծ, վճռական

և յիշատակելի դեր կատարեց: Երկըրորդը՝ Կովկասեան թուրք սոցեալ-դեմոկրատական կուսակցութիւնն է (ԴՂ-թումայունի-ամիուն), որ սկզբում ուղարկում է միայն ագիտատորներ, (*) թաւրիզում էլ նման կոմիտէներ հիմնելու, իսկ յետոյ առաջման հոսանքը ուժեղացնում, ուղարկելով մուջահիդների զինւած խմբեր, որոնց հետ նաև վրացի մասնագէտ ումբաձիգներ: Կովկասեան սոց. յեղափոխական կուսակցութիւնը մասնակցում է պարսկական շարժմանը շատ փոքր չափով, միայն մի քանի անհատ ընկերներով, որոնք տեղաւորում են կամ դաշնակցական մարտական խմբերում, կամ թուրք մուջահիդների հետ կողք կողքի: Բոլոր յեղափոխական տարրերը մինչև վերջն էլ գործը տանում են միահամուռ և հա-

(*) Պարսկական սոց. դեմոկրատները յետագայում հիմք են դնում պարսկական Դեմոկրատ կուսակցութեան, որ առաջին անգամ կազմակերպւած երևան է գալիս Ու. Մէջլիսում և որ մինչև այսօր էլ Պարսկաստանում գործում է և է պարսկական ամենաուժեղ և տարածւած յեղափ. կուսակցութիւնը՝ դեմոկրատական պահանջներով: Հ. Պ.

մերաշխ:

Սակայն Թաւրիզը, ինչպէս գիտեն մեր ընթերցողները, կուռ միաբանութիւն չէր ներկայացնում. Սրբաբն ու Դաւաչի թաղերը, «Էջումանը Խալամիէի» հետ միասին կանգնած էին շահի և հին աէժիմի կողմը և ներսից մեծապէս խանգարում էին ազատագրական կրոււին: Ահա այդ աննպաստ հանգամանքը վերացնելու համար, յունիսի 15-ին, սահմանագրական տասն թաղերի ներկայացուցիչները ղերմում են ուս. գեներալ հրապատու Պոխիտոնովին, հաշտարարի դեր կատարելու համար թաղերի միջև: Պոխիտոնովը, նիկոլայեան աէժիմի չինովնիկ և Խղովսկիներրի և Սաղանովներրի հարազատ սան, թշնամական ամենավատ տրամադրութիւններն ունէր դէպի պարսկական յեղափոխական շարժումն ու յեղափոխականները, թուրք թէ հայ, որոնց գործունէութիւնը բացասական և ամենամռայլ գոյներով են նկարագրւած նրա дошесение-ներում՝ ուղղւած արտաքին գործոց մինիստրութեան, կամ Թէհրանի իր դեսպանին:

Պոխիտոնովի միջոցով սկսւած հաշտութեան բանակցութիւնները ձգձգւում են, մինչև որ շահի հրամանով քաղաք են հասնում Ղարադաղի ճիաւորները՝ Նուսրէթ-ուլ-սուլթանի առաջնորդութեամբ, որ քաջալերում է, «Էնչումէնը Խալամիէին», և որը իր պահանջների մէջ օրէցօր դաւնում է աւելի ու աւելի յանդուզն և խստապահանջ: Պոխիտոնովը, ինքը խորհուրդ է աալիս յեղափոխական թաղերի ներկայացուցիչներին, ղերմել յունիսի վերջին քաղաք մտած դարագաղցի Ռահիմ խանի որդի Բոյուկ խանին, սպիտակ դրօշակներ պարգած, յանձնել ղէնքերը և հաշտութիւն խնդել: Դրութիւնը շափազանց լուրջ էր. ուժերի յարաբերութիւնները անհամեմատելի. լինել թէ չլինելու օրերն էին: Թաւրիզի յեղափոխական շարժումը իր կրիզիսն էր ապրում: Թաղերը իրար յետևից անձնատուր էին լինում, սկսած Խիաբանից: Նահանգական Էնչումանի շինութեան գլխին անգամ սկսում է ծածանել հնազանդութեան սպիտակ դրօշակը, երբ ահա երևան են գալիս միաժ ամանակ

ժողովրդական երկու հերոսներ՝ Սաթ-
թար խանն և Բաղր խանը, մէկը մի ան-
յայտ ձիավաճառ, իսկ միւսը՝ մի հա-
սարակ որմնագիր Խիաբան թաղեցի,
որոնք իրենց սակաւաթիւ զինակիցնե-
րով կարճ ժամանակում համախմբում
են լքւած և յուսահատ ժողովրդի ցը-
ւած ոյժերը և նրա զիմազրական ու-
զին վերականգնում:

Իրերի գրութիւնը միանգամայն
շուռ է գալիս. Թաւրիզի շարժման կեան-
քում այդ օրերը պատմական օրեր էին.
էնչումանի շէնքի սպիտակ դրօշակը
կարմիրի է փոխւում. շահի հօրդանե-
րը քաղաքի արևելեան թաղերը գրաւե-
լով կանգ են առնում և չեն կարող
այլևս առաջ շարժել ու զբաղւում
են այդ թաղերի խանութիւնների կողո-
պուտով, մինչև յուլիս 9-ը, երբ նրանք
մտնում են Շէշկիլանը և հրդեհում նո-
րակառոյց շինութիւնները, որոնց մէջ
նաև ուսուպարսկական դպրոցը, և յու-
լիս 15-ին կողոպտում նոյն իսկ Զին-
գեր ընկ. կարեմեքենաների և ոմն Նօվ-
րուզովի մագաղիմները, բոլորն էլ ուս-
սահպատակ հիմնարկութիւններ: Թաւա-

նըն ու կողոպուտը աւելի մեծ չափեր
են առնում, երբ յուլիս 26-ին քաղաք
են հասնում 400 շահսեվաններ, Նասրուլ-
լա և Դէրվիշ խաների ղեկավարութեամբ
և միանում զարադաղցիներին: Բանն
այնտեղ է հասնում, որ Պոխիտոնովը
այդ փաստերը Թէհրան հաղորդելիս, չի
կարողանում չխոստովանել, որ շահի
կողմնակիցների ցոյց տւած բարբարոս
անկարգութիւնների հակառակ, սահմա-
նադրականների տիրապետութեան տակ
գտնւած թաղերում կարգ ու կանոն է
պահւում և ոչ մի ուսուսպատակի, կամ
օտարահպատակի ամենավտօք վնաս
անգամ չի հասել:

Այնուհետև ղէտքերը ընթանում են
յեղավիտական ժողովրդի համար շատ
բարեյաջող: Նա իր ղեկավարներին՝ Սաթ-
թար խանի, որին «Սարգարը միւլի» և
Բաղր խանի, որին «Սալար Միւլի» տիտ-
ղոսներն է տալիս՝ առաջնորդութեամբ
մաքրում է գրաւուած թաղերը թշնա-
միներից, սղմելով սրանց իրենց նախ-
կին որջում՝ Դաւաշիւում: Թաղերի սահ-
մանների վրայ և քաղաքի շրջակայքում
և մուտքերի մօտ հողապատնէշներ են

շինուում և դիրքեր ամրացուում, որոնց վրայ չորս զլխաւոր կէտերուում տեղաորուում են իրենց 9 Թնդանօթները: Դիրքերը պաշտպանուում են զինւած Ֆիդայիներով: Կազմուում է յեղափոխական կառավարութիւն «Այալէթի Ձէլիլէի Ազէրբէյջան» յանձին Թաւրիզի էնջումէնի, որի հանդիսաւոր նիստուում, կայացած օգոստոսի սկզբին, որպէս Ատրպատականի փոխ նահանգապետ այդ կառավարութեան գլուխ է ընտրուում Իջլալ-ուլ-մուլքը, մինչև որ նախկին նահանգապետ Մուխրիբ-ուս-սալթանէն Պարիզից կը հրաւիրուէր: Ատրպատականը անջատելու տրամադրութիւնը հետզհետէ ուժեղանուում է:

Յեղախախական կառավարութեան և նրա մարտիկների պէտքերի համար միջոցներեն որոնուում անմիջական հասոյթը համարուում է ժողովրդական հանգանակութիւնը, մինչև որ քաղաքը եկամուտի աղբիւրներ կը գտնէր: Ձեռնարկուում է հանգանակել 65,000 թուման, որից մի ամսւայ ընթացքուում, մինչև յուլիսի 30-ը հաւաքուում է 28,000 թուման:

VII.

Այս բոլորի հանդէպ տեսնենք ի՞նչ է ներկայացնուում և ի՞նչ է անուում կառավարակ. գօրքը, շահի կողմնակիցները, որոնց մի մասը Դէվէչիումն էր:

Օգոստ. 2-ին, շահի կողմից Ատրպատականի ընդհանուր նահանգապետ նշանակւած էյնը-գովլէն հասնուում է վասմինջ (*) և երկու պատգամաւորների՝ Սարէմ-ուս-սալթանէի և Մութամինի-Րուայիաի միջոցով բանակցութիւններ է սկսուում սահմանադրականների հետ, բայց ապարդիւն: Հինգ օր յետոյ, օգ. 7-ին Թաւրիզ է հասնուում նաև կառավարական գօրքերի ընդհ. հրամանատար նշանակւած Սփահաբը, որ համներոււն պէս, էյնը-Դովլէի նման հաշտութեան փորձեր է սկսուում, յեղափոխականների հետ գործը խաղաղ ճանապարհով վերջացնելու համար, բայց այս անգամ արդէն ուսուակ. հիւպատոսի միջնորդութեամբ:

(*) Թաւրիզից 20 վերստ հեռու, Թէհրանի ճանապարհին Թրքարնակ մի գիւղ է 600 տուն բնակչով: Հ. Պ.

Պիտի դիտենք այստեղ, որ շահի կողմնակիցները՝ էյնը-դովլէն և Սփանտաբը անվերապահ կերպով վստահում են ուսու կառավարութեան դիպլոմատիկական ներկայացուցչին և ամեն ինչ սրտաբացօրէն յայտնում նրան, չը վերապահելով նոյն իսկ գինևորական գաղանիքները: Այսպէս, Պոլսիտոնովի հետ տեսակցութեան ժամանակ էյնը-դովլէն չի թազցնում յայտնելու, որ կառավարական գինևորական ոյժերը քիչ են և չափազանց անբաւարար՝ յեղափոխական թաւրիզը զսպելու համար, ունեն միայն մի լեոնային փոքր թընդանօթ և ողորմելի ռազմամթերք և իրենց ընդհանուր դրութիւնը՝ «կատարելապէս անօգնական»: Հաշտութեան այս փորձերն էլ են անցնում ապարդիւն, որովհետև սահմանադրականները ոչ մի խոստումի հաւատ չեն ընձայում, առանց ի հարկէ հաստատուն գարանտիաների:

Օգոստ. 27-ին կառավարական բանակին օգնութեան է հասնում Թէհրանի ասրեադը՝ 300 հոգուց բաղկացած, մի քանի թնդանօթներով: Միւս կող-

մից Մակեի սարգարի օգնական գօրքն է հասնում 300 մարդով և 6 թնդանօթներով: Խոյը գրաւելուց յետոյ՝ Մակեցիները, Իգադարուլահ կամ Իգօ խանի առաջնորդութեամբ օգ. 28-ին անցնելով Աջի-չայի կամուրջը, սկզբում յաջողապէս յարձակում են Սաթթար-խանի դիրքերի վրայ: Ամբխորդ թաղում, սակայն Սաթթար խանի հակայարձակումը և մի ուժգին գրոհը բաւական է լինում Մակեի բանակը ջարդու փշուր անելու: Իգօ խանը խայտառակ պարտութեան մատնեւած փախչում է, թողնելով 2 թնդանօթներ, պաշար, ռազմամթերք, բազմաթիւ սպանւածներ: Աջի-չայի զաստաւում և գերիներ և ազաստանում Մարանդ՝ նոր ուժեր ստանալու ակնկալութեամբ:

Նկատելի է, որ Մակեցիների յարձակման ժամանակ քաղաքի արևմտեան կողմից, էյնը-դովլէի գօրքը քաղաքի արևելեան կողմից ոչ մի աջակից շարժում չի կատարում միաժամանակ: Յետոյ պարզւում է, որ էյնը-դովլէն առհասարակ խուսափում էր իր անունը անմիջական կերպով խառնելու պատ-

ժիշ արշաւախմբի գործունէութեան հետ:

Սեպտ. ամսի սկզբին Էյնը-դովլէն վերջին փորձն է ուզում փորձել Թաւրիզը հնազանդեցնելու համար. նա ըստ պառնում է նոյն ամսի 11-ին քաղաքը թնդանօթի կապել և նրա կրակով «գետին հաւասարեցնել»: Նա իր սպառնալիքը կատարում է մի օր ուշ՝ սեպտ. 12-ին, բայց շատ ողորմելի արդիւնքով: Քաղաքի արևելեան և հարաւային բլուրների վրայ դասաւորւած մի քանի թնդանօթներով ամբողջ օրը գնդակներ է թափում քաղաքի վրայ, որոնք ընկնում են Մարալան, Խիաբան և Ամիրախըզ թաղերի այգիներում և դատարկ փոշի ու ծուխ բարձրացնելուց բացի, քաղաքին ոչ մի լուրջ վնաս, ինչպէս և յեղափոխականների դիրքերին՝ հասցնել չեն կարողանում: Միաժամանակ հրացանային կատաղի կռիւ է մղում նոյն օրը քաղաքի բոլոր մասերում, որոնք վերջանում են ընդհանրապէս յեղափոխականների օգտին: Երեկոյեան կռիւը դադարում է, ինչպէս և ուժակոծութիւնը:

Այս յաղթանակի փառաւոր պտու-

ղը սահմանադրականները վայելում են դրանից մօտ երկու շաբաթ յետոյ, հոկտ. 4-ին, երբ Էյնը-դովլէն յոյսը կտրած, թողնում է Թաւրիզը, անցնում Վասմինջ և այդտեղից էլ Թէհրան: Նրա գորքը ցիրուցան է լինում: Դաւաշի, այդ ըէակսիոն թաղը անպաշտպան մնալով անձնատուր է լինում յեղափոխականներին. «Էնջումանը-խալամիէն» ինչպէս և նշանաւոր ըէակսիոններն են տները քարուքանդ են լինում և ցրիւ տրւում, դրանց մէջ նաև շահի կալւածների կառավարիչ Հաջի միրզա-Ռահիմ խանի տունը: Քաղաքը ամբողջապէս յեղափոխականների ձեռքն է արդէն, որի հսկողութեան և պահպանութեան համար Էնջումանը ձեռնարկում է անմիջապէս կազմակերպելու ոստիկանութիւն՝ 400 հոգուց բաղկացած և միլիցիա, բաղկացած 500 ձիաւորներից և 100 ոտաւորներից՝ Սաթթար և Բադր խաների ղեկավարութեամբ: Ապա քաղաքը ամրացւում է ներսից և դրսից:

Յեղափոխական բանակը սպառնալիք է բաժնուում. մի մասը քաղա-

քից դէպի հարաւ՝ Մարաղա է շարժ-
 ւում և ճանապարհին զբաւում է Դու-
 խարդանը, որ հացի ամբար է համար-
 ւում. իսկ Զուլֆայի ճանապարհը բաց
 անելու համար, պէտք էր քշել Մա-
 րանդի դատաւոր Շուջայի-նիզամին և
 զբաւել Մարանդը: Վրացի բմբաձիգ-
 ների առաջարկով փոխանակ զինւորա-
 կան գործունէութեան դիմելու, պոս-
 տով Մարանդ է ուղարկւում մի դժո-
 խային մեքենայ, Նուջայի-նիզամի հա-
 ցէին, որ բացւելով նրա սենեակում,
 սպանում է նրան, որդուն՝ Շուջայի-
 լաչկեարին, Փարրաշըաշուն և պատահ-
 մամբ այնտեղ գտնւած Թաւրիզեցի եր-
 կու ուսանապատակ հայերից՝ Զիբրա-
 յել Բուզաղեան և Յակովբ Բաբայեան՝
 վերջինին աչքից վիրաւորում: Այդ դէպ-
 քից յետոյ, հոկտ. 14-ին Մարանդը հը-
 նազանդւում Թաւրիզին և Թաւրիզ —
 Զուլֆա ճանապարհի հաղորդակցու-
 թիւնը վերականգնւում:

VIII.

Թաւրիզի ըմբոստութիւնը և նրա
 յաջող դիմադրութիւնը շարունակել էին

շահին և նրա կողմնակիցներին: Մահ-
 մէզ Ալու համար անսպասելի էր, որ
 իր նախկին աթոռանիւստը, արիստո-
 կրատ Թաւրիզը կարող էր այդպէս ա-
 րագ և անակնկալօրէն դեմօկրատա-
 կան շարժման բոյնը դառնալ: Սակայն
 նա չի յուսահատուում, նոր մորթիլիզա-
 ցիայի է ենթարկում իր բովանդակոյ-
 ժեքը՝ այնքան խղճուկ և ողորմելի և
 նրանց՝ ըմբոստ Ատրպատականի դէմ է
 ուղարկում. իսկ միւս կողմից առաջ է
 քաշում իր և խորհրդատուների գիպ-
 լումատիկական հանճարը՝ տիպիկ և ա-
 րևելեան, հովանաւոր պետութիւնների
 պահանջները և խորհուրդները յետ մը-
 դելու համար, որոնք երևան էին եկել
 այն ժամանակ և զուգադիպաբար դա-
 սաւորել ի նպաստ սահմանադրական
 շարժմանը:

Տաճկաստանի սահմանադրութեան
 վերականգնումը նոյն տարւայ՝ 1908 թ.
 յուլիս 10-ին, մի նոր անակնկալ էր
 շահի համար: Դրանից յետոյ Կ. Պոլ-
 սում կազմւած պարսիկ «Մէշրութէ թէ-
 լէքների» (սահմանադրական) կազմած
 կոմիտէտը՝ «Էնջումէնը Սաադէթ» մեծ

օժանդակութիւն էր հասցնում Թաւրի-
զի յեղափոխականներին: Դրանից բիշ
անց Թէհրան հասած տաճկաց նոր դես-
պան Նասիհ Բէյին ունկընդրութեան
ընդունելիս, շահը առանձին հետաքը-
քրութեամբ հարց ու փորձ էր անում
Պօլսում կատարած պատմական նշա-
նաւոր անցքերի մասին: Եւ իրօք հա-
րեան մահմեդական երկրի ազատա-
գրութիւնը մեծ տպաւորութիւն էր ա-
ռաջ բերել Պարսկաստանում և մեծ ո-
գևորութիւն այն տարրերի մէջ, որ նը-
ման ազատագրութեան համար արիւն
էին թափում:

Յուլիսի վերջերին Թէհրանում 150
հոգի բեստ են նստում տաճկաց նոր
դեսպան Նասիհ Բէյի մօտ և պահան-
ջում սահմանադրութեան վերահաս-
տատումն: Ճիշտ է, կառավարութեան
ձեռք առած միջոցները բեստ նստող-
ների հոսանքը դէպի դեսպանատունը
կանգնեցնում է, բայց և այնպէս խը-
մորումը մայրաքաղաքում ուժեղանում
է մինչև այն աստիճան, որ շահին շը-
շապատողների մէջ միտք է առաջ գա-
լիս հրաւիրել մի խորհրդակցական ժո-

ղով, մի շարք ազդեցիկ իշխաններից,
հոգևորականներից և քաղաքացիներից՝
սահմանադրութեան հիմնական կանոն-
ները վերամշակելու համար: Շահը ինքը
անձամբ կանչում է դադարած «Նադայի-
Վաթան» լրագրի խմբագիր Մէջդ-իւ-
խսլամին և հրահանգում, որ իր թերթը
վերահրատարակէ, միայն չափաւոր տօ-
նով, որովհետև Մէջլիսի ուժակոծումից
յետոյ, մայրաքաղաքում ոչ մի թերթ
լոյս չէր տեսնում: Սեպտ. 3-ին լոյս
է տեսնում թերթի առաջին համարը և
3,000 օրինակ միանգամից սպառւում,
չտեսնւած մի բան պարսկական մա-
մուլի պատմութեան մէջ. սակայն թեր-
թը շուտով փակւում է «ազատ», բառը
գործածած լինելու համար:

Թաւրիզում կատարւող անցքերի
ազդեցութեան տակ, օգոստ. 21-ին Պե-
տերբուրգի անգլիակ. դեսպան սըր Ար-
տուր Նեկոլսոնի և ռուսակ. արտաքին
գործոց մինիստրութեան կառավարիչ
Չարիկովի միջև տեղի ունեցած բա-
նակցութիւնների և համաձայնութեան
հետևանքով, երկու պետութիւնների
դիպլոմատիկական ներկայացուցիչները

Թէհրանում՝ Հարդիֆն ու Մարլինգը, օգոստ. 26-ին ներկայացնում են շահին հետևեալ նոյնանման նօտան. «Մ նկատի ունենալով, որ նորին մեծութիւն շահը յայտարարել է իր մտազրութեան մասին՝ հրատարակել նոր հրաման առաջիկայ օրէնսդրական ընտրութիւնների վերաբերմամբ, ուսական դեսպանը և Մեծն Բրիտարական գործերի հաւատարմատարը, համաձայն իրենց կառավարութիւնից ստացած ցուցմունքների, և առանց որևէ միջամտութեան պարսկական ներքին գործերին, զրտնում են բոլորովին ժամանակին և ցանկալի, որ նորին մեծութիւն՝ շահը, երկիրը վերջնականապէս խաղաղացնելու, առևտրական շահերի և ընդհանուր վիճակի բարելաւման տեսակէտից բարեհաճէր միաժամանակ հրատարակել, որ նրա որոշումը՝ պահպանել սահմանադրական ըէժիմը, որ նա սուել է իր երկրին, անփոփոխելի է և որ Մէջլիսը, որի ընտրութիւններին շուտով կը ձեռնարկուի, զուարեւելու է նոյ: 1-ին *):

(*) «Сб. дшбл. докум.» вып. I. С - Петерб. 1911 г. ст. 220: 2. 9.

Ի սլատախան այս միահամուռ նոտայի, շահը նախ բերանացի և ապա սեպտ. 5-ին գրաւոր և խուսափողական ձևով պատասխանում է, որ ինքը միշտ հետևել է պետութիւնների, մանաւանդ Ռուսաստանի խորհուրդներին, միայն սպասում է, որ Թաւրիզը խաղաղի, որի մասին իբր թէ բարեյաջող լուրեր են ստացուել, որպէսզի շասեն թէ շահը զիջեց Թաւրիզի ըմբոստութեան առաջ:

Ներկայացուած նոտայից մի քանի օր յետոյ, սեպտ. 7-ին լրանում է Մէջլիսի զումարման համարնշանակուած երեք ամսեայ ժամանակամիջոցը: Նոյն օրը լուրեր են պտտուում մայրաքաղաքում, որ սահմանադրական շարժման ղեկավարները ցոյց են կազմակերպելու և բեստ են մտնելու ուսական, անգլիական, գերմանական և տաճկական դեսպանատներում: Գիշերային հաւաքումներ են լինում, ֆոնդ է կազմուում շարժման սկզբնաւորութեան համար, գիշերային պրոկլամացիաներ են բաց թողնուում և բազարում կայցուում են շահին ներկայացրած ուսանողիական նոտայի հեկտոգրաֆով սպազրած օրինակները՝

ժողովրդին ոգևորելու համար: Դեսպանները ծայր տևող փոթորկի առաջնաունելու համար սեպտ. 10-ին նորից յիշեցնում են շահին և պահանջում ներկայացված նոտայի համար գոհացուցիչ պատասխան, որից յետոյ, երկար խուսափումներից և ձգձգումներից վերջ Մահմեդ Ալին սեպտ. 17-ին հրատարակում է Մէջլիսի գումարման իր հրովարտակը՝ ճապող ու ձգձգված բովանդակութեամբ, նշանակելով վերջապէս ընտրութիւնները շեփվալ ամսի 1-ին (հոկտ. 14-ին), իսկ Մէջլիսի բացումը՝ նոյեմբ. 1-ին: Հրովարտակում ասւած է, որ եղած կարգադրութիւնը Ատրպատականի վրայ չի տարածելու, մինչև որ Թաւրիզը չհնազանդւի և զէնքը ցած չը դնի:

Դեսպանները այս վերջին կէտից դժգոհ, մինոր թերադրութիւն են անում շահին, որ սակայն անուշադրութեան է մատնում, որից յետոյ սկսում է ձգձգումների և հակասական կարգադրութիւնների ամբողջ շարան՝ Մահմեդ Ալու կողմից: Ընտրութիւնների ժամանակը գալիս է, փոխանակ ընտրութիւններին

ձեռնարկելու, Բաղր-Շումարում, Մէջլիսի բացման համար նշանակւած օրը հաւաքւում են մօտ 300 հոգուց բաղկացած ամեն կարգի ըէակսիոներներ և մի պետիցիա են ներկայացնում շահին, հիմնւած իբր թէ զուառներից և երկրի ամեն մասերից ստացւած հեռագիրների վրայ՝ թէ ժողովուրդը Մէջլիս չի ուզում և մէջրութային (սահմանադրութեան) հակառակ է:

Այս բոլորից սրտապնդւած, նոյեմբեր 9-ին շահը հրատարակում է մի նոր դէստրիսատ, որում յայտնում է, որ երկիրը հիասթափւած է առաջին Մէջլիսից, որ զանազան հոգևորականներ և ազդեցիկ աշխարհականներ երկրի գանազան մասերից դիմել են իրեն, որ վերացւի սահմանադրութիւնը. դրա համար էլ ինքը յետ է վերցնում իր առաջին կարգադրութիւնը և «այլևս Մէջլիսի խօսք չի անելու», այլ մտածում է ամ «Մէջլիսի-շուրայի Մէկլէկաթի» կամ Պետական Սորհուրդ գումարելու մասին, որ համապատասխան է իբր թէ շարիաթի և երկրի պահանջին: Նմանօրինակ պատասխաններ է տալիս նա և

պետութիւնների դեպքաններին ամեն անգամ, երբ սրանք յիշեցնում են շահին իր հանդիսաւոր խոստումներն ու յանձնառութիւնները:

IX.

Շահը միւս կողմից կարգադրում է իր ձեռքի տակ եղած գինւորական ոյժերին նոր փորձ կատարել թաւրիզը զսպելու համար: Էյնը-դովլէն նոյեմբ. ամսի սկզբներին այդ կարգադրութեան համաձայն Վասմինջ է հասնում: Նա իր ձեռքի տակ ունի հազիւ 300 պարսկական կողակ՝ 6 թնդանօթով, սակայն շուտով նրան օգնութեան են հասնում Բահիւ խանի Ղարաղաղի ձիաւորները, որոնք բռնում են քաղաքի արևմտեան մասը՝ Չուլֆա տանող ճանապարհի վրայ. գրաւում են Սօֆիան և մօտենում Ալարին, թաւրիզից հազիւ 10 վերստ հեռաւորութեամբ: Շրնորհիւ զրա, թաւրիզի յարաբերութիւնը Չուլֆայի հետ, որ սահմանադրականների ձեռքումն է, Ղոչալի Սուլթանի դեկավարութեամբ, կատարելապէս ընդհատուում է:

Միւս կողմից Մարաղայի դատաւորը և յայտնի կալւածատէր Շուջայի-դօվլէ՝ Սէմէթ-խանը, հաջի Ինթիշամի օգնութեամբ շահի հրամանով գրաւում են Մարաղա, յետ մղում սահմանադրական զօրքը այնտեղից և Ֆիդայիներին, գրաւում նաև Սարգարութը՝ քաղաքին շատ մօտիկ և դեկտ. 28-ին մտնում թաւրիզի արւարձանները և ամրանում Ղարամելլիքում: Քաղաքը օրէ օր սղմւում է շահի ուղարկած ըէակսիոն ոյժերի խիտ օղակում և կատարելապէս կղզիանում, կտրւելով արտաքին աշխարհից:

Սկսւում են արիւնահեղ կռիւներ քաղաքի պաշտպան սահմանադրականների և շահի ուժերի միջև, որ փոփոխակի յաջողութիւններով տևում է մինչև 1909 թ. մարտ ամսի վերջերը: Քաղաքի պաշտպանութեան գործում Հ. Յ. Իսախանկցութիւնն ու Գեռու խումբը կատարում են անգնահատելի և աճնւէր ծառայութիւններ: Դեռ նոյ. ամսին նրա խմբից մի տասնեակ, հերոսական անձնւիրութեամբ պաշտպանում են քաղաքին մօտիկ Մուժամբար հայաբնակ

գիւղը՝ Ղարադաղի ձիաւորների և հա-
րկան թիւք գիւղերի միացեալ յարձա-
կումից. այստեղ ընկնում են յիշատա-
կելի նիկոլն ու Արտեմը: Ուրիշ կոիւ-
ներում, Այլարում և Մարալանում ընկ-
նում են Մարտիրոսը, Կարօն և ուրիշ-
ները. ուումբի պայթումից, պատրաս-
տութեան ժամանակ, զոհ է գնում բուլ-
ղարացի Գէորգը: Խոյի կոիւներում,
Մակւի սարդարի հօրդանների դէմ կո-
ւելիս ընկնում է Զուլումաթը. Ուր-
միայի կոիւներում՝ Խորէնը: Սրանք
թանգազին, բազմաթիւ զոհերի միայն
մի քանի ներկայացուցիչներն են, որ
տւել է Հ. Յ. դաշնացուութիւնը, յա-
նուն Պարսկաստանի ազատագրութեան
և երկրում դեմոկրատական կարգերի
հաստատման, առանց որևէ անձնական-
ազգային շահ ինկատի ունենալու: Նը-
րանք մեծ մասամբ թաղւած են Թաւ-
րիզում, Լիլաւա թաղի հայոց եկեղե-
ցու բակում:

Մարտի վերջին քաղաքի զրուութիւ-
նը լրջանում է, շնորհիւ այն հանգա-
մանքի միայն, որ պաշարման պատ-
ճառով կենսամթերքները սկսում են

ահաւոր թանգութեան հասնել. հաց չի
ճարւում: Ռուսական հիւպատոսարանի
կառավարիչ Միլլերը, որ Պոխտոնովի
տեղապահն է նշանակւած, անգլիական
հիւպատոս Վրատիսլաւի հետ միասին
խնդրում են էյնը-դովլէից, բաց թող-
նել քաղաքում ապրող օտարահպատակ-
ներին 80 խալար ցորեն, որին սկզբում
պատասխանւում է, որ օտարահպա-
տակները կարող են քաղաքից հեռա-
նալ: Ռուս կառավարութիւնը ապրիլի
7-ին հարկ է համարում Թէհրանի իր
դեսպանի միջոցով և անգլիակ. կառա-
վարութեան համաձայնութեամբ շահին
ներկայացնել 24 ժամայ ուլտիմա-
տում, ճանապարհը բաց անելու և ցո-
րեն մտցնելու համար քաղաքում, ըս-
պառնալով հակառակ դէպքում իր սեփ-
հական ոյժերով այդ անել: Նոյն օրը
ռուս-անգլիական հիւպատոսարանի ներ-
կայացուցիչները Թաւրիզում՝ Ստեւենս
և վաճառականայետ Զ. Նազարբէգեան
Վասմիշ են ուղարկւում, ցորենի գոր-
ծի կարգադրութեան համար, որ ձրգ-
ձգւում էր:

Նոյն օրերը Թաւրիզի հոգևորա-

կաններից Միդաթը-խալամ հաշտարարի դեր է վերցնում և բանակցութիւններ սկսում կողմերի միջև. սահմանադրականները նրա և ապա ռուսական հիւպատոսի միջոցով պահանջում են. 1) բաց թողնել օրական 150 խալար ցորեն միայն ժողովրդի համար, 2) նշանակել անմիջապէս պատգամաւորներ՝ բանակցութեան համար, 3) ընդհատել զինւորական գործողութիւնները, 4) յայտարարել ընդհանուր քաղաքական ամնիստիա, 5) յանձնել միայն պետական զէնքերը, պահելով մասնաւորները և 6) սահմանադրական գարանտիա:

Ռուս-անգլիական հիւպատոսները թաւրիղում, իրենց կողմից, թէհրանի իրենց դեսպանների միջոցաւ խնդրում են կարգադրել, որ հաշտութեան կամ քաղաքի նւաճման ղէպչերում. 1) Ռահիմ և Սամաթ խաները իրենց վայրենի խառնիճաղանձով քաղաք չմտնեն, այլ մընան 35 վերստ հեռաւորութեան վրայ, 2) այն անձերին, որոնց շահը չի ներում, թոյլ տրւի որ կոնսուլատներում ապաստանեն, 3) կողմերը որոշեն զինաթափման խնդիրը. 4) քաղաք մտնի

միայն էյնը-գովլէն, իր կողակներով կարգը պահպանելու համար և 5) շահը կարգադրի էյնը-գովլէին, որ քաղաք մտնելիս լսի երկու հիւպատոսների խորհուրդներին ու թելադրանքներին:

Ռուսակ. ուլաիմատումը ազդում է շահի վրայ. նա կարգադրում է ճանապարհը բաց անել, ցորեն բաց թողնել և 6 օրով զինադադար անել: 2 օր յետոյ, ապրիլ 9-ին, հեռադրական հաղորդակցութիւնը վերականգնում է դրսի հետ, Վասմիէջի կողմից ցորեն է ներս թողնում քաղաքը, բայց ընդհարումները կանգ չեն առնում. կառավարական զօրքերը այդ օրերը նոր յարձակում են գործում Մաթիւր արւարձանի վրայ: Երկու օր անաջ ապրիլ 7-ին տեղի ունեցած կռոււմ ընկնում է ամերիկացի միտինար Բասկրուիլը, որ կռոււմ էր յեղափոխականների շարքերում: Այսպիսով, հաշտութեան բոլոր յոյսերը կորած համարելով, Իզվոլսկին կարգադրում է կովկասի փոխարքային, որ ռուսական զօրքը սահմանն անցկացնէ:

Ռուսակ. զօրքը, բաղկացած 3 բատալիոնից, 6 սօսնեակից, սապիորների

մի բոսայից և Չբատարէայով, գեներալ Մնարսկու հրամանատարութեամբ ապրիլի 16-ին թաւրիզ է հասնում: Զօրամասին տրւած է հետևեալ ինստրուկտիոն. 1) հոգալ ռուս-անգլիական և առհասարակ օտար հպատակները կեանքի և գոյքի ապահովութեանը. 2) պաշար մտցնել քաղաքը նրանց համար. 3) արգելել որ կռուող կողմերը քաղաքում և մօտիկ շրջակայքում, ինչպէս և թաւրիզ-Չուլֆա ճանապարհի վրայ չկատարեն իրենց ընդհարումները. 4) չմիջամտել երկրի ներքին խնդիրներին և 5) գործել թաւրիզի ռուսակ. հիւպատոս Միլլերի խորհրդակցութեամբ:

Կարևոր է դիտել, որ ռուսական զօրքի սահմանն անց կենալուն ոչ պակաս նըպաստում է հիւպատոս Միլլերը իր սենսատիոն հեռագիրներով՝ արտաքին գործոց նախարարին և թէհրանի դեսպանին ուղղած: Պոխիտոնովի այս յաջորդը իր նախորդի նման ամենավատ տրամադրութիւններն ունի դէպի սահմանադրականներն ու ազատագրական շարժումը. քաղաքի զրութիւնը ամենասև, մուսլ գոյներով են նկարագրւած նրա

հեռագիրներում, որ տալիս է «Նարըն-Չադոյն գիրքը». այնտեղ իրողութիւնների զոյները խտացրած և յաճախ խեղաթիւրւած են: Ապրիլ 6-ին նրա ճեռագրում ասւած է, որ իբր ֆէդայիները քաղցածութեան պատճառով հայկական թաղերը խուզարկելով մօտենում են կօնսուլատին. մտադիր են ըսպանելով հիւպատոսներին մէկին, հրաւիրել օտար միջամտութիւն: «յարձակումը մեր և անգլիական կօնսուլատի վրայ սպասուում է վաղը», ասւած է նոյն հեռագրում*): Ապրիլ 14-ի նրա հեռագրում ասւած է. «Պօլսի դէպքերը (Աբդիւլ Համիդի գահընկեցութիւն) սահմանադրական ֆէդայիներին դարձրել են կամակոր. պաշար սռացան և շարունակում են կռուել. Սաթթար խանը սպառնացել է կրակել եւրոպացիների վրայ, եթէ ռուսակ. զօրքը քաղաք մտնի» և այլն: Մինչդեռ մեզ յայտնի է որ սահմանադրականները վերաբերում էին դէպի օտարները վերին աստիճանի զգուշաւոր և կորրեկտ:

*) «Сб. диял. док.» вып. II. С. Иетерб. 1911 ст. 132, 153. Լ. Պ.

Ռուսական զօրամասի Թաւրիզ մտնելուց յետոյ ընդհարումները այնտեղ սահմանադրականների և շահի զօրքերի միջև դադարում են: Յեղափոխական բանակը զէնքը ցած է դնում*): Քեռին իր խմբով անցնում է Սալմաստ. շահի բանակը առանց քաղաք մտնելու ցրւում է. Ռահիմ-խանն ու Շուջայիզովէն իրենց տեղերն են քաշւում, մէկը Ղարադաղ, իսկ միւսը՝ Մարաղա. էյնիզովէն իր կողակներով մեկնում է

*) Ֆիդայիները զէնքը ցած են դնում, բայց զինաթափ չեն լինում: Զօրքի մտնելուց 10 օր յետոյ, ապրիլ 27-ին պատահաբար վիրաւորւում է ռուսական պատրուլը. Միլլերն ու Մնարսկին Թաւրիզի Անջումանից պահանջում են տուգանք 100,000 դրան, Ֆիդայիների ընդհանուր զինաթափումն և այրումն այն տանը, որտեղից կրակւած է, ինչպէս և Սաթթար խանի տանը: Արտաքին գործոց մինիստրութեան օգնական Չարիկովը հասկացնում է Միլլերին, որ զրւած պահանջները շատ խիստ են, որ բաւական է, եթէ միայն ռուսահպատակ Ֆիդայիները զինաթափւեն: Արա հետեանօք Սաթթար և Բաղր խաները ապրիլի վերջերին բէստ ենմտնում տաճկաց հիւպատոս Մէհմէդ Սլի Բէյի մօտ: Հ. Պ.

Թէհրան, կորագրուել և պարտւած, հաւատացնելու շահին, որ ռուսական զօրքի մուտքը պատճառ է եղել, որ ինքը չի կարողացել ապստամբ քաղաքը նւաճել:

X.

Սակայն և այնպէս, յեղափոխական շարժումը Պարսկաստանում կանգ չի առնում: Թաւրիզի հերոսական դիմադրութիւնը և այնտեղ կատարւած անցքերը իրենց հոյակապ արձագանքն են գտնում երկրի միւս վայրերում: Ժամանակագրական կարգով երկրի զանազան կէտերում տեղի են ունենում հետեւեալ բռնկումները:

Դեռ նախորդ տարւայ դեկտ. 16-ին, Իսպահանում, նահանգապետ Իգբալ-էզզովէից դժգոհները, մօտ 200 հոգի բէստ են մտնում անգլիակ. հիւպատոսարան, պահանջում նահանգապետ նշանակել սահմանադրական կարգերի կողմնակից իլխանի Սամսամուս-սալթանէին, հեռացնել մալայիրեան գնդերը և քաղաքը յանձնել «Ջիլլայի» գնդին: Թէհրանից նոր նահանգապետ նշանակւած Ֆերման-ֆերմա հրաժարւում է

Իսպահան գնալ, որովհետև նոյն ամսի վերջերին Սամսամուս-սալթանէն իր մարդկանցով Իսպահան էր մտել, իսկ Իգբալը-դովլէն բնատ մտել անգլիական հիւպատոսարան: Մի քանի ամիս յետոյ Իսպահանում հաւաքուած մի քանի հազար բախտիարներ Սարդար-Ասադի առաջնորդութեամբ պատրաստուած են յարձակել Թէհրանի վրայ:

Կովկասից, գլխաւորապէս Բագլից անցած պարսիկ և վրացի յեղափոխականները համերայիւելով տեղական պարսիկ ազատական տարրերի և Հ. Յ. Իշանակցութեան տեղական մարմնի՝ Գիլանի Կոմիտէի հետ, կոմիտէի անդամ Եփրեմի գլխաւորութեամբ յունւար 26-ին յարձակելով Ռաշտի նահանգապետ Սարդար-աֆիսովի տան վրայ, սպանում են նրան, այրում նահանգապետաբանը և քաղաքի վրայ պարզում յեղափոխական դրօշը. թալիշի խանը 30 մարդով և Ռաշտում եղած պարսկական կողակները իրենց հրամանատարով բնատ են մտնում ուսական հիւպատոսարան: Հիւպատոս Շարիատները յայտնելով այս անցքե-

րի մասին Թէհրանի ղեսպանին, նրա միջոցով խորհուրդ է տալիս շահին՝ ինչքան հնար է արագ ճնշել շարժումը, քանի ապստամբները չեն գրաւել Մէնշիլի կամուրջը, որ կարեւոր ռազմական պունկտ է Թէհրան տանող ճանապարհի վրայ: Շահը ի հարկէ ոյժեր չունենալով, նախ մտադրում է էմիր-նիզամին ուղարկել 400 մարդկանցով, բայց այդ անբաւարար գտնելով, յարմար է դատում խաղաղ միջոցների դիմել, որի համար Սփահդարին նշանակում է նահանգապետութեան տեղապահ, Ռաշտում մտքերը խաղացնելու համար, որովհետև Սփահդարը համարում էր սահմանադրութեան համակիր: Այս դէպքից յետոյ Ռաշտի ուսական հիւպատոսարանի պահակները թիւը 50 կողակով աւելանում է:

Յունւարի կէսերին Բէնդէր-Բուշիրում բռնկած յուզմունքի ժամանակ վերաւորում է նահանգապետ Ալի խանը: Այդ դէպքից քիչ յետոյ անգլիացիները 100 զինուոր 4 գնդացիբով դեղբասանտ են հանում, անգլիացիները և օտարահպատակների շահերի պաշտպանութեան անուշով:

Փետր. ամսի սկզբին թղթակից Պանովը մի խումբ յեղափոխականների գլուխն անցած, ափ է դուրս գալիս Բէնդէրգէզ և այնտեղից մարդիկ ուղարկում Բարֆրուշ և Մէշէգիսէր: Նրա արշաւանքը սակայն անյաջողութեան է հանդիպում, ապրիլ 1-ին թուրքմենները շրջապատում են նրան Աստրաբադում. նրան յաջողում է հեռանալ, մնացածները շրջապատում են, այրւում է 8 գիւղ, ժողովուրդը լցւում է հիւպատոսարան:

Բէնդէր-Աբասում, մարտ 8-ին մի խումբ յեղափոխականներ սէյիդ Մուրթուզայի ղեկավարութեամբ գրաւում են նահանգապետի տունը: Նահանգապետը իր մարդկանցով փախչում է: Անգլիացիների հանած դժւարութիւնների պատճառաւ, սակայն, սկսւած շարժումը խեղդւում է:

Մարտի 23-ին, Աստարայում ուսուպարսկական սահմանադիւտում, Ռաշաի ազդեցութեան տակ ապստամբութիւն է ծագում. նահանգապետի ուղարկած մարդիկ պարտութիւն են կրում և յետ են փախչում:

Հանգիստ չէր նաև մայրաքաղաքը: Դեռ դեկտ. 7-ին 1908 թ. մօլթէնիդ Սադր-ուս-ուլեման 40 հոգով բեստ է է նստում Թէհրանում տաճկական դեսպանատան՝ սահմանադրական լոգունդներով: Ենորհիւ միայն այն հանգամանքի, որ կառավարութիւնը անմիջապէս պահակներ դրեց դեսպանատան շրջակայքը, բեստաւորների թիւը չաճեց: Միկնոյն ժամանակում, 150 հոգի սէյիդ Ալի աղա Յագդի առաջնորդութեամբ բեստմտան մայրաքաղաքին մօտիկ Շահաբդիւլ-ագիւմ ուխտատեղին, որի վրայ մի քանի օրից յետոյ շահի թելադրանքով յարձակում է կատարւում, որ համարւում է աննախընթաց դէպք բնատի իրաւունքի դէմ՝ Պարսկաստանում:

Հովանաւոր պետութիւնների գիպլումատիկականներկայացուցիչները^թ էհրանում աչալըջօրէն հետևում են գաւառների և մայրաքաղաքի ացնուղարձին: Նրանք շատ անգամներ թելադրում են շահին՝ զիջումներ անել և գործը խաղաղութեամբ վերջացնել, սակայն շահը ամեն անգամ յամառում էր, որովհետև նրան շրջապատողները լուրեր էին.

հաղորդում նրան և հաւատացնում, որ թաւրիզը շուտով կը նւաճւի և որ մօտ է ապստամբութեան զսպումը:

Միւս կողմից շահը փողի մեծ կարիք ունէր, բռնկւող ապստամբութիւնները ճնշելու. բայց պետական դանձարանը բոլորովին դատարկ էր: Դեռ նախորդ՝ 1908 տարւայ զեկտ. ամսի սկզբներին նա որոշում է արտաքին գործոց մինիստր նշանակել չափաւոր-լիբերալ Սաադէթ-դովլէիին, որպէսզի իրականացնէ 5 քուրուր (2 ու կէս միլիոն) թումանի փոխառութիւնը հարեան պետութիւններէից. բայց որովհետև սրանք նախ քան պարտք տալը, վստահութեան համար պահանջում էին երկրում բեֆորմներ մտցնել, խորամանկ շահը արդարանում էր նրանով, որ առանց վերամի չի կարող հարկաւոր բեֆորմները իրականացնել: Այսպիսով փոխառութեան խնդիրը պարսիկ կառավարութեան համար հերթական և հրատապ խնդիր է դառնում:

Յունւարի 3-ին, ռուսական զեւպանատան գործերի կառավարիչ Սարլին (Հարզէիզի տեղապահը) և անգլիա-

կան նոր զեւպան Բէրկլէյը (Մարլինգի յաջորդը) նորից խորհրդակցութեան նիւթ են դարձնում փոխառութեան խնդիրը և խորհուրդ տալիս շահին պատօնի հրաւիրել գործի ընդունակ մարդիկ՝ Սաադէթ-դովլէի տիպի, կարգի բերել երկրի եկամուտի աղբիւրները՝ մաքս, մալիաթը և զինւորական տուրքը, վերահաստատել 1907 թ. սահմանադրութիւնը և կազմել ընտրական նոր կանոններ, այդ զէպքում միայն կը տան նրան 5 միլիոն Ֆրանգ աւանս պայմանաւ նաև, որ նշանակւի կոնտրոլ մարմին, կազմւած ռուսական և անգլիական բանկերի ներկայացուցիչներէից և մի պարսիկից, հսկելու համար ստացւած դրամի ծախսման վրայ: Այդ օրւանից ահա ձագում է առնում Պարսկաստանի Ֆինանսական կոնսրոլի խընդիրը, որը պարսիկ կառավարութիւնը մինչև այժ էլ խուսափում է իրականացնել, ամեն անգամ, երբ հովանաւոր պետութիւնները յարուցանում են այդ խնդիրը այս ու այն զէպքում, որովհետև ֆինանսական կոնտրոլի հաստատումը իր հետ կը բերէր առանց այն

էլ իր անկախութիւնը կորցրած Պարսաստանի կատարեալ ստրկացումը երկու կապիտալիստ պետութիւններին:

Մարտի 2-ին շահը ունկնդրութեան ընդունելով ռուսական զործերի հաւատարմատար Սարլինին, խնդրում է ելք ցոյց տալ, դուրս բերելու համար երկիրը ստեղծւած անհնարին կացութիւնից և խոստ նսում է նովրուզից (մարտ 5) յետոյ մարտի 9-ին ժողով գումարել, խորհրդակցելու մտցնելիք բէֆորմների շուջը, կանչելով նաև տաճկահան դեսպանատան բեստ նստողներին: Սակայն բէֆորմների գործն ուշանում և ձգձգւում է:

Ապրիլ ամսի սկզբին ռուս և անգլիական կաբինետները համաձայնութեան են գալիս, ներկայացնելու շահի կառավարութեան մինամուռ նոտա, բաղկացած հետևեալ պահանջներէց. 1) Հրաժարումն Սաղրազամի և Սփահսալարի (այս կէտի վրայ շատ չպնդել), 2) վերահաստատումն 1907 թ. սահմանադրութեան, 3) կազմել կաբինետ և Պետական Խորհուրդն ընդունակ և մատնանշւած անհատներէց, հակառակ դէպ-

քում աւանսը չտալ, 4) հրատարակել ընդհանուր ամնխատիա, 5) անմիջապէս նշանակել պարլամենտական ընտրութիւնների ժամանակը, 6) ռուսական կառավարութիւնը տալիս է $2\frac{1}{2}$ միլիոն ֆրանկ աւանս, իսկ անգլիական կառավարութիւնը իր հերթին կրտայ որպէս աւանս նոյնքան գումար, եթէ ապագայ Մէջլիսը ուզենայ կնքել արտաքին մեծ փոխառութիւն. 7) Այս պահանջները չիրականացած դէպքում շահի կառավարութիւնը ոչ մի յոյս չըզնէ երկու պետութիւնների վրայ: Յանձնելով այս միատնական նոտան ապրիլ 6-ին, պետութիւնների դեսպանները անում են ամենախիստ առաջադրութիւն:

Շահը, ինչպէս տեսնում ենք, անել զրութեան մէջ է. երկար ձգձգումներից յետոյ, նոյն ամսի վերջերին նա հրատարակում է Մուզաֆերեդզին շահի 1907 թ. սահմանադրութիւնը առանց որ և է բացատրութեան և նախարանի, իսկ երկու օր յետոյ, ապրիլ 28-ին յայտարարում է ամնխատիա: Մայիս 4-ին Պետական Խորհրդի ան-

դամներինց 21 հոգուց բաղկացած մի կօմիտէ է ընտրուում, ընտրական կանոններ մշակելու համար. այդ կօմիտէտը իրեն անւանում է նաև «ճաշտարաբ կօմիտէ» և հեռագրական յարաբերութեան մէջ է մտնում յեղափոխութեամբ բռնկւած գաւառների հետ: Մակայն նրանք, մանաւանդ Թաւրիզ, Ռաշտն ու Իսպահանը չեն հաւատում շահի խոստումներին և նրա հրատարակած «ահմանադրութեանը»: Նրանք համոզւած էին, որ դրուժան միապետինց այդ կարելի է խլել միայն զէնքի ուժով և մայրաքաղաքի վրայ յարձակումը, տաճկական յեղափոխութեան օրինակով, դաւնում էր օրէցօր աւելի և աւելի հրամայական:

XI.

Ռաշտի յեղափոխականները քաղաքին և շրջանին տիրապետելուց յետոյ, դեռ փետրեալին շարժել էին Էնգէլի-Թէհրան խճուղու վրայ և կարճ ժամանակում հասել Մէնջլի կամուրջը և գըրաւել նրա բարձունքները՝ Ռուժպարի կիրճում, Ռաշտից 81 վերստի վրայ:

Ապրիլի 21-ին նոյն յեղափոխական բանակը շարժւում է դէպի Ղազին և կարճ դիմադրութիւնից յետոյ գրաւում քաղաքը, Թէհրանից հազիւ 135 վերստ հեռու և ձեռք բերում ռազմական մեծ աւար:

Մալլինի զեկուցման մէջ, սրւած ուռուական արտաքին դորժոց մինխտրութեան, Թէհրանի վրայ արշաւող, Ռաշտի մօտ 1000 հոգուց բաղկացած յեղափոխական բանակի մասին խօսելիս, առաջին անգամ, ապրիլ 11-ին, խօսք է լինում զաշնակցական խմբապետ Եփրեմի մասին, որ 180 ընտիր մարտիկներով պահելով բանակի կենտրոնը, նոյն օրերը բռնել էր խարղանի լեռնալանջերը՝ Մէնջլի մօտ: Ըստ Մալլինի, Հ. Յ. Իաշնակցութիւնը այս շարժման մէջ կատարել է առաջնակարգ դեր: Բանակի մեծագոյն թիւը կազմում էր Սփահարի զօրքը, մօտ 900 հոգուց բաղկացած, որ որպէս նահանգապետի տեղապահ, դեռ Ռաշտի յեղափոխութեան ժամանակ, տարւայ սկզբին Գիլան անցնելով, իր մարդկանցով անցել էր սահմանադրականների կողմը:

Ռաշտի ուս. հիւպատոս Շարիտտերը, որ նոյն օրերը այդ ճանապարհով անցել էր Թէհրան, իրերի գրութեան մասին Սաբլինին գեղուցանելու, չէր կարող վերին աստիճանի յարգանքով չխօսել յեղափոխական բանակի կորրեկտութեան և ոյժի մասին, մինչդեռ Ղազւինում կենտրոնացած և դէմօրալիզէ եղած մօտ 1300 կառավարական զինւորների մասին խօսում է վերին աստիճանի աննպաստ:

Սակայն Թէհրան արշաւող այս բանակը միայնակ չի մնում. նրան շուտով օգնութեան է հասնում հարաւից Իսպահանը: Ապրիլ 25-ին, Ղազւինի գրաւումից մի քանի օր յետոյ, Իսպահանի ուս. հիւպատոս Բոզոսյաւակին հեռագրով յայտնում է, որ 1500 բախտիարներ Սարգար Ասադի ղեկավարութեամբ հաւաքւել են Իսպահան, Թէհրան արշաւելու համար: Իսկ Թաւրիզը, որ ուսական գօրքի ներկայութեան պատճառով շարժւել չէր կարող և գործնանական աջակցութիւն ցոյց տալ անկարող էր, բարոյական աջակցութիւն միայն հասցնում էր, իր խրախուսիչ հեռագիրներով:

Բախտիարների, պարսկական սարհարթի հարաւարեմտեան լանջերում ապրող լօներին ցեղակից այս արիական, կիսավաչկատուն ցեղի ասպարէզ գալը ի պաշտպանութիւն դեմոկրատական կարգերի Պարսկաստանում, ըստ երևոյթին բաւական տարօրինակ է և անակնկալ: Հետեւալ հանգամանքները կարող են գուցէ մի փոքր լոյս սփռել այս խնդրի վրայ. նախ այն, որ սրանց ցեղապետները, ինչպէս օրինակ Սարգար Ասադը, եւրոպական միջավայրում ապրած և երկրի ներքին և արտաքին քաղաքականութիւնից բաւական հասկացողութիւն ունեցող մարդիկ են. ապա շահի կատարած բանակցութիւնները՝ արտաքին փոխառութիւն կնքելու համար, որ երկրի կարծիքով միշտ համարւել է կործանարար և ստրկացնող, որ նրանց հայրենասիրութիւնը վիրաւորում էր. ապա սրանց հետևող կոնտրոլի խնդիրը, միւս կողմից ուսական գօրքի ներկայութիւնը Ատրպատականում. ապա պետութիւնների առեւտր խորհուրդը շահին՝ սահմանադրութիւնը վերականգնելու համար և վեր-

Ղապէս, սլարսկական սահմանադրական շարժման մէջ աչքի ընկող դեր կատարելու ձգտումը՝ Սուլթան Համիդի նրման Մահմէդ Ալուն ևս գահից ցած առնելով: Բախտիարները թիւը ըստ շտաբա կապիտան Туманский-ի 80--100000 է, իսկ ըստ А. М. Золотаревъ-ի՝ մօտ 370,000, որոնք կարող են հանել 30--40000, ձիաւոր:*)

Յունիսի 19-ին ամեն յոյսեր կորցրած շահը իր մօտն է հրաւիրում սուսանգլիական զեապաններին և գանգատուում, որ ինքը համաձայն նրանց տւած խոստումանը, սահմանադրութիւնը վերականգնելուց յետոյ էլ ոչ մի տեղից պաշտպանութիւն չի գտնում և ապստամբ բանակները հիւսիսից և հարաւից մօտենում են իր մայրաքաղաքի դռներին: Դեպքանները հասկայնում են նրան, որ այժմ արդէն շատ է ուշ:

Յաջորդ օրը, շահի զինւորները, որ պահում էին Քերեշի կիրճը և կամուրջը, Թէհրանից 39 վերստ հեռաւորութեան վրայ, Սիահդարի և Յփրեմիոյ-

*) Полк. А. И. Медвѣдевъ, «Персія», С. Петерб. 1909. Եր. 404: Հ. 9.

ժերի ուժգին ճնշման ներքոյ, մեծ կորուսաներով նահանջում են Շահաբադ, Թէհրանից միայն 20 վետս հեռու: Սարգար Ասադի ձիաւորները, որոնք Ղումը անցել էին, շուտով միանում են Ռաշտի յեղափոխական բանակին և միասին շրջապատում մայրաքաղաքը:

Յունիս 20-ին, սուսակ. արտաքին գործոց նախարար Իզվոլսկին անգլիակ. կառավարութեան, իր Լոնդոնի դեսպան Բենկենդորֆի միջոցով արամագրում է համաձայնելու զեաանա հանել էնգէլի, էնգէլի-Ղազին ճանապարհի ապահովութեան համար. զօրքը հասնելու է մինչև Ղազին միայն և կատարելապէս չէզոք դիրք է բռնելու, չը միջամտելով Մահմէդ Ալու և իր ժողովրդի մէջ մղուող կռիւն: Մի քանի օր անց, էնգէլիում ափ է հանում Վաբինսկի կազաչի պօլկ 500 հոգուց, կովկասեան հրացանաձիգ հետևակ բաաալիոն, պուլիմիոաներ, մի բաաարէ 4 թնդանօթով և սապիորները մի գունա: Այս զօրամասին տրւած է նոյն ինստրուկիոնը, ինչ որ սպրիլ ամսում Թաւրիզ մտած գելերալ Մնարսկու զօրամասին:

Պարսկական ափը դուրս եկած
 ուսական դեսանտը որ դէպի Ղազին
 է շարժոււմ, պատճառ է դառնում, որ
 յեղափոխականները իրենց արշաւանքը
 դէպի Թէհրան շտապեցնեն: Նոյնպիսի
 խորհուրդներ տալիս են և Լոնդոնի և
 Կ. Պօլսի պարսիկ հայրենասէրները հե-
 ազգրով, շտապելու, քանի ուսական
 զօրքը նրանց չի խանգարել:

Յուլիսի 2-ին ուսական զեապանների ներկայացուցիչները՝ Ռո-
 մանովսկին և Ջրչիլ յեղափոխականնե-
 րի բանակում տեսակցելով Սփահարի
 և Սարգար Ասադի հետ, նկատոււմ են,
 որ աւելորդութիւն է Թէհրանի վրայ
 արշաւելը, որովհետև ըստ իրենց կար-
 ծիքի, շահը իր խոստումները կատա-
 րոււմ է և իբր թէ հաստատ քայլով դի-
 մում է դէպի սահմանադրական ըե-
 փիմը: Յեղափոխական բանակների շէֆե-
 րը նրանց միջոցով ներկայացնում են
 հետևեալ պահանջները. 1) թոյլ տրւի ի-
 րենց 150-ական զինուած յեղափոխա-
 կաններով Թէհրան մտնել. 2) նահան-
 գական էնչումանները պիտի հսկեն
 մինչև Մէջլիսի գումարումը 3) ար-

տաքսել ժողովրդին անցանկալի ըէակ-
 սիոներներ, 4) ոչ կանոնաւոր զօրքի
 զինաթափում, 5) զինւորական մինիս-
 տրըն է պատասխանատու բոլոր զինուած
 ոյժերի և արսենալի, 6) Մօլբրի-էդ-
 դովէից վերցնել պոստն ու հեռագրի
 մինիստրութիւնը. 7) էնչումանները
 համաձայնութեամբ նշանակել սահմա-
 նադրական նահանգապետներ: Ապա
 Սարգար Ասադը անելով մի քանի դի-
 տողութիւններ պատգամաւորները նը-
 կատողութիւններին՝ աւելացնում է.
 «ցտեսութիւն Թէհրանում»:



Եւ իրօք յեղափոխական միացեալ
 բանակը յուլիսի սկզբին Թէհրանի պա-
 տերի տակն է. յեղափոխութեան կող-
 մակիցները մայրաքաղաքում և ի մաս-
 նաւորի Հ. Յ. դաշնակցութեան նահաս-
 տանի Կօմիտէն ներսից մեծ աջակցու-
 թիւն են ցոյց տալիս արշաւող բանա-
 կին: Շահի անպէտք սարքազներն ու
 ձիաւորները փախուստ են տալիս կամ
 ջարդոււմ են, կազակները բրիգադան
 ուսս գնդապետ Լիախովի հրամանա-
 տարութեամբ անկարող լինելով դիմա-
 զրել, պարտոււմ և անձնատուր է

լինում. Սարգար Արշաղի դիմադրու-
թիւնը քաղաքի փողոցներում շատ կարճ
է տևում յեղափոխականների արագ և
եռանդուն զրոհի տակ և նահանջում է,
թողնելով 2 թնդանօթ: Մահմեդ Ալի
շահը իր վերջին յոյան ու յինարանը
կորցրած, յուլիս 3-ին ժամը 9-ին Սալ-
թանէթարաղի պալատից փախչում և
բեստ է մտնում ուստակ. դեսպանատա-
նը, քաղաքին մօտիկ Ջերզենդէ ամարա-
նոցում: Մայր թագուհու՝ վալիահիթի և
շատ փոքրաթիւ աւետայի եեռ հապճեպ
և ալյալւած ներս ընկնելով դեսպանա-
տանը, շահը պահակներին ուսերէն
լեզուով ողջունում է ասելով. „ЗДОРОВО“:
Իեսողանատան վրայ անմիջապէս բար-
ձրանում է ուսուանդլիական դրօշակ:
Նոյն օրը ազատական բանակը
մտնում է Մէջլիսի շինութիւնը՝ Բէհա-
րիստանի պալատը. շտապ գումարած
«Գերագոյն Խորհուրդը» տան երեք
ամեայ վալիահիթ՝ Սուլթան Ահմեդ-միր-
զոյին շահ է հրատարակում, փոքր եղ-
բօրը՝ Մահմուդ Հասան-միրզին՝ գա-
հաժառանգ, Ազդ-ուլ-մուլթին՝ պետու-
թեան խնամակալ, Սփահդարին՝ զինու-

րական, Նասր-ուլ-մուլթը՝ արտաքին գոր-
ծոց, Սարգար-ասաղը՝ ներքին գործոց
մինիստր, Իսկ Եփրեմին յանձնւում է
մայրաքաղաքի պաշտպանութիւնը: Կազ-
մւում է այսպիսով ժամանակաւոր յե-
ղափոխական կառավարութիւն: Անգ-
լիական և ուստական կառավարութիւն-
ները Թէհրանի իրենց ներկայացուցիչ-
ների միջոցով յայտնում են, որ ճանա-
չում են կատարւած պետական յեղա-
շրջումը և նոր շահին՝ ըստ ժառանգա-
կան օրէնքի, Իսկ գահընկէց շահը համա-
ձայն դեռ նախորդ դեկտեմբերին եր-
կու պետութիւնների միջև կայացւած
համաձայնութեան, ուսուանդլիական
միացեալ պետութիւնների հսկողութեան
ներքոյ, երկու ամիս յետոյ, օգոստոսի
27-ին Ռուսաստան է ուղարկւում
և բնակութիւն հաստատում Օդեսայում:



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



«ԸՅԳ» ԳՐԱԳՆԱԲԱՆԻ ՀՐԱՏԵՐԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1) Գեղեցկութիւն սև՝ թէ նամաստութիւն: Գինն է 2 շահի:
- 2) Արագիլ խալիճայի պասմութիւնը: Գինն է 6 շահի:
- 3) Իմ ուղեկցուհին, Գինն է 5 շահի:
- 4) Խելօճ Եղիսաբէթը: Գինն է 4 շահի:
- 5) Ի՞նչ գնե՛լ: Գինն է 5 շահի:
- 6) Յեղափոխական շարժումները Պարսկաստանում: Գինն է 2 դրան:

Գինն է 2 դրան

Հայաստանի Ազգային գրադարան



NL0429202

18156